Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format
Adapt — remix, transform, and build upon the material

ՀԱՅՈՑ ԱԶԳԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ
Ա. Վաչեանի ծախքով

ՆԻՒԹԵՐ
ՀԱՅ ՄԵԼԻՔՈՒԹԵԱՆ
ՄԱՍԻՆ

Ա. պրակ.

ԱՌԱՔԵԼ ՎԱՐԴԱՊԵՏ

ԴԻԶԱԿԻ ՄԵԼԻՔՈՒԹԻՒՆԸ

Վաղարշապատ
Էլեկտրաշարժ տպարան Ս. Էջմիածնի
1913

8006

ՀԱՅՈՑ ԱԶԳԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ՆԻՒԹԵՐ
ՀԱՅ ՄԵԼԻՔՈՒԹԵԱՆ
ՄԱՍԻՆ

Ա. պրակ.

ԱՌԱՔԵԼ ՎԱՐԴԱՊԵՏ

ԴԻԶԱԿԻ ՄԵԼԻՔՈՒԹԻՒՆԸ

Վաղարշապատ
Էլեքտրաշարժ տպարան Ս. Էջմիածնի
1913.

ԵՐԿՈՒ ԽՕՍՔ

Հայոց Ազգագրական Ընկերութիւնը «Խամսայի մելիքութեան» հեղինակ Րաֆֆու մահուան քսանհինգ ամեակը տօնելիս՝ որոշեց ձեռնարկել մի շարք հրատարակութիւնների, նուիրուած հայ մելիքութիւնների պատմութեան և մանաւանդ նրա աղբիւրներին: Ներկայ գրքոյկը կազմում է այդ շարքի առաջին պրակը: Սրա նիւթը հանուած է Գտիչ վանքի վանահայր Առաքել վարդապետի երկհատոր աշխատութեան ձեռագրից, որ գտնւում է Հայոց Ազգագրական Ընկերութեան գրադարանում և նուէր է ստացուած Տ. Մարիամ Ս. Լազարեանից: Ձեռագիրը բաղկացած է 428 երեսներից, ունի 75 գլուխ, որոնց մեծագոյն մասը զանազան հրաշապատումներ են, ինչպէս օր. «Պատմութիւն հրաշից ուրումն աղքատի», Յաղագս մարդակերպ հարսնաքար անուանեալ վիմին», «Յաղագս հրաշագործ Ջուղալու խաչին» և այլն. կան և պատմական թանգագին նիւթեր, ինչպէս Ներկայ Դիզակի Մելիք-Աւանեանների ման-

բաման պատմութիւնը, սկսած Մելիք Եգա-
նից մինչև նոյն տոհմի վերջին ժառանգ-
ները։ Կայ նաև Մելիք Շահնազար Բ.-ի
պատմութիւնը, որ մենք կը հրատարակենք
այս շարքի մի այլ պրակում Մելիք-Շահ-
նազարեանների վերաբերեալ ուրիշ նիւ-
թերի հետ։ Գնահատելի է մի ժամանակա-
գրական ցուցակ Ղարաբաղի նշանաւոր անց-
քերի մասին, սկսած 1721 թուից մինչև
1813 թ., որ արտագրուած է Գասպար քա-
հանայի ձեռքով գրուած մի Մաշտոցից, ինչ-
պէս նաև այլ պատմական տեղեկութիւններ՝
Աղա Մահմադ խանի արշաւանքի, նրա
սպանման և դրանից յետոյ Ղարաբաղում
տիրած սովի, ժանտախտի գաղթի մասին,
և այլն։

Այս աշխատութիւնը, ինչպէս ասուած է
յիշատակարանում, «աւարտեալ եղև ի սուրբ
վանս Գաչոյ ի նահանգին Դիզակու յերկ-
րին Աղուանից. ի թագաւորութեան Ռու-
սաց Ալէքսանդրայ, ի հայրապետութեան
ամենայն Հայոց Տեառն Սրբազնագոյն Գէ-
որգայ կաթողիկոսին Գուբսեցւոյ։

Ե. Լ.

Արժան համարիմ յայսմ վայրի համա-
ռօտ իմն յիշատակութեամբ ի մէջ բերել
զանուանս ազգասէր անձանց՝ այնոցիկ,
որոց և իսկ յիշատակս չէ արժան ի կա-
րօտելոց մնալ անյայտ թագուցեալ: Զի
կարգ բանիս բերէ ինձ առնել. արդեօք
ո՞ւր են նախնեաց մերոց բարեվայելուչ
վաստակք ազգասիրական. և յիշատակք
հոգեշահ զաւազայից անձանց. արդեօք
ո՞ւր է այն հոգին ազգասիրական, որ ո՛չ
միայն ազգային պարտաւորեալ անձինն
շարժէր ի ցաւակցութիւն, այլ և իսկ
զծաղկահասակ մանկունս, որք զանձինս
իւրեանց ի նուէր աստուածսիրութեան,
աներկիւղ ի սրոյ անօրինաց՝ մատուցա-
նէին: Եւ ես արք գործովք ի սակս հայ-
րենասիրութեան ի նահատակութիւն փու-
թային: Մանաւանդ՝ նախարարք ազգա-
սէրք եդին գլխովին զանձինս իւրեանց
յասպարէզ շահատակութեան: Թողումա-

սել. Թէև, իսկ աղջկունք նորահաս՝ և պատանիք սիրայորդոր թողեալ զսիրախորժ զարդարանս առագաստի հարսանեաց անվեհեր զանձինս ի զէնարան ազգասիրութեան նուիրէին ի ձեռն ընական թշնամեաց ազգիս Հայոց: Իսկ և իսկ լաւագոյն համարեցան ի սակս օրինապահութեան Հայրենեացն հեղուլ զարիւնս իւրեանց, քան եղծանելի պսակօք զարդարել ի ձեռն այլակրօնից:

Ահա ժամ է ինձ, ի նախկին հոգելից հեղինակաց պատմագիրս մնացեալ ճառքաղոն ըստ կարի ի յայտնութիւն անցուցանել. արդէն յիշատակեալ անձանց ազգային արարեալ բարեգործութիւնս ունիմ ասել, որ և տակաւին ի խորշս երկրին Ազուանից ծածկեալ մինչև ցայսօր ի համայնից՝ սպասէր հարցափորձ անձանց: Ի պահանջել հարկին՝ կամ եղև ինձ մնացեալ ինչ աղօտաճաճանչ նշխւքն գտանել զթագուցեալսն , և ի լոյս ընծայել հայրենասէր կարօտելոցն:

Ընկալցուք զսկզբնաւորութիւն նորագիւտ պատմագրութեանս ի շնչագրութեան Պարսից շահ Սուլտան կոչեցեալ թագաւորին. ի ժամանակի ծանրագոյն

տուգանացն յիւրում յարմարաւոր ինչ տեղւոջ ունիմ յայտնել հանդերձ թուաքերութեամբն նախ՝ մնայ ինձ յայտնել զհնագոյն բերդաքաղաքէն Դողու և ես զվայելուչ դրութենէ, հուսկ յետոյ զերևելի անձանց արարս:

Բերդաքաղաքս անկանի ի ստորոտս միոյ բարձրագոյն լերին ի յարեմտեան կողմն բազմահատ Նահատակին Յակովբայ երեք ժամու ճանապարհաւ հեռի, յԱրցախեան երկրի ի Նահանգին Դիզակու: Բերդաքաղաքս ի հնումն բաղկանայր ի հազար և ի հինգհարիւր տանց, ըստ շնչագրութեան Պարսից արքային: Ամենեքեան ընտիր վաճառականք, և բազմագանձ հարստութեան ճոխացեալք. ընդ ամենայն երկիրս և ի հեռաւոր քաղաքս ի տէրութիւնս ցրուեալ և տարակայեալ իրաքանչիւր ոք ի շահավաճառութեան պարապեալ: Տունս և բնակութիւնս բազմածախ գանձուք զարդարեալ: Նաև զթէատրօն՝ կազմ և պատրաստ զօրացն պատրաստեալ միշտ և յաւէտ ձիընթաց արագութեամբ խաղային: Թիւ աղիւսագործ կրպակաց վաճառականաց մինչև ի հազարաւորս հասանէր: Արևելեան կողմ ա-

մեր պարսպապատ պատուարօք ամրա-
ցուցեալ. ընդ նմին թողեալ զերկս մե-
ծամեծ դրունս երկաթակապ կախեալ.
բայց մնացեալ կողմանն ընդ դրութեամբ
իւրով փակեալ է թիկնապահ լեառն բար-
ձրաբերձ: Նաև՝ չորս սագաչէն սրբատաշ
կամարակապ կառուցեալ զեկեղեցիս հիմ-
նեալ ի վերայ մասանց սրբոց. և ևս յօրի-
նեալ արծաթի և ոսկեղէն քանդակեալ խա-
չիւ և ի նոսա ամփոփեալ զմասունս և զնշ-
խարս ամենայն հրաշագործ սրբոց: Նաև՝
աջ սրբոյն Բարսղի Կեսարացւոյն ակա-
նակիտ յօրինեալ, արարեալ են զբազում
բժշկութիւնս հիւանդաց և ախտացելոց:
Միջնորդ և բարեխօս եղեալ երկնաւոր
բարկութեան և պատուհասից. իսկ մինն
եկեղեցեացն իսպառ աւերեալ աւերեցաւ
հիմնայատակ, արատաւորեալ էր ի հին
ժամանակի յայլազգաց. մնացեալքն ամ-
բողջք են: Դարձեալ՝ դաշտքն լիարար և
բերրի բազմատեսակ այգեանց և զանա-
զան պտղաբերութեանց այգեստանեօք
և անկօք շարադրեալ: Գետանին յայամ
բնակութեանս անոյշ գինիք անվնաս և
պտուղս քաղցրագոյն: Նաև մետաքս ազ-
նուագին. երկուստէք կողմանց գետք

յորդաբուղխք և ջուրքն սառնատեսակք
ցրտագոյն արծաթափայլ հոսեալ ի յա-
կանց պատուականաց սարահարթ լանջաց
Տիգափայտ լերինն. եկեալ անցանեն ի
ծաղկանկար ձորձորացն ի յանտառախիտ
վայրս մեծամեծ թաւուտ ծառոց և ան-
ալի բաժանին յերկու մասունս. եկեալ
ոռոգեն զբազում դաշտս լիաբարս. զի
ի նոսա գտանին ձկունք անուշահամ և
քաղցրահաշակ ճոխացեալ, ի հնումն ան-
ուանաւոր էր յոյժ: Ուստի կարևորագոյն
համարիմ աստանօր՝ ի բերդաքաղաքիս
բնակեալ իշխանաց՝ և նախարարաց արար-
եալ քաջութիւնսն և զվիշտս ազգասի-
րութեան ի պատմութենէ անցուցանել՝
է որ ի գրչագիր պատմութենէ, և է որ
ի յարձանագրութենէ, և է որ յարժա-
նահաւատ արանց: Ի դրան մայր սրբոյ
եկեղեցւոյն Յոհաննու՝ արդէն յիշատա-
կեալ բերդաքաղաքին կայ մատուռ մի
կառուցեալ հիանալի. թէև այժմ հնացեալ
է, բայց նշմարանք մնացուածոցն ինքնին
յայտնին. սագաչէն եկեղեցւաձև շինեալ,
և ի նմա կառուցեալ զսեղան ի հնումն
մատուցեալ են զոհաբան արարողու-
թիւնս պատարագի յաւուր մահուան նա-

խարարացն. այժմ ոչ: Կան ամփոփեալ ի նմա մարմինք նախարարաց և մեծամեծ զօրապետաց. Նկարէն քանդակեալ տապանաքարս եդեալ ի վերայ նոցա. և ի վերայ տապանաքարացն զանազան պատկերս քանդակագործ կերպիւ ածանց փորաձեւեալ: Նաև նոյնավէրջ տառիւք տանաւորս փորագրեալ. և զգործս, կամ զքաջութիւնս իւրաքանչիւրոցն կարճի կարճոյ հաւաքմամբ բոլորելով զիմաստս բազմադիմի բովանդակեալս. արդարև զհոգիս վերծանողացն ի հիացումն շարժէնն: Աստանօր և իսկ կարևոր համարիմ ընթերցասէր Հայազատացս անձանց առաջի առնել՝ նախ զնոյն ինչ գրեալ տանաւորսն ըստ կարգի. և ապա արարեալ երախտաւորութիւնս առ հայրենիս իւր լիակատար պատմաբանել. զի չիք ինչ ընդդէմ հաւատոյ բանից:

ՅԱՌԱՋԻՆ ՏԱՊԱՆԱՔԱՐԻ ԱՅՍՊԷՍ.

Այս է տապան բաց իշխանին.
Եկան անուն մեծ մելիքին:
Որ է որդի բարեպաշտին.
Ղուկաս անուն վարդապետին,

Սիրեցեալ եղեւ ամենեւին:
Նադիր անուն թագաւորին.
Տիրապետեալ սա Աղւանից:
Ցոյժ պատուեցաւ Պարսից ազգին,
Քան զիշխանս Հայոց երկրին.
Հրաման եղեւ կոչման սորին,
Եղեւ սիրեցեալ ի կամս Փրկչին,
Ի եւ ՃՂԴ թուականին,
Եդաւ աստ ի տապանի.
Հոգւով փոխեալ՝ ի հայրենին.
Որք հանդիպէք այս տապանի,
Հայր մերիւ յիշէք զհոգին:

ՅԱՂԱԳՍ ԳԱՂԹԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՍՈՅՆ ՀԱՆԳՈՒՑԵԱԼ ՄԵԼԻՔ ԵԿԱՆԱՅ:

Ի փոքր ինչ պատմագրութեան զերկրէն Աղուանից, զոր աշխատասիրեալ Եսայի կաթուղիկոսն սրբոյ Աթոռոյն Գանձասարայ ի թուականին Հայոց ռճկ յորմէ բերէ պատմութիւնն յիւրում ժամանակի զդիպուածոցն. կամ քանի մի հնական տեղեկութիւնս մինչև ի ռճյա ամն. և ապա աւարտեալ դադարի. զի զլիակատար պատմութիւնն աւարտել չկամի: Իմ անտի առեալ թէ ի սաստիկ պատերազմէ

վրայ զօրացն՝ երբև փախեաւ Իմամղուլի խանն ի ձեռաց վրայ թագաւորին Վախտանկայ, և նա յանձառութենէ դիմեալ ոտնաբոկ և գլխաբաց, և օձին պատատա-եալ շրջէր ի դրունս ազգին ալանայ մինչև անգամ ի գուբ և ի խիղճ շարժեալ զլեռնաբնակսն. յետ այնորիկ ժողովեալ զբազմութիւն զօրաց նոյա և եկեալ յանկարծօրէն փախոյց զթագաւորըն վրաց. և սկսան աւար առնել զքաղաքն ամենափարթամ Տփխիս. յետ այնորիկ ի մէջ երկոցունց ազգացն Հոնաց և Վրաց կամ զազուրացուց մեծ իմն խառնակութիւն և հակառակութիւն ծագեալ՝ զկնի սակաւուց սկսան սաստկանալ ի սահմանս երից ազգացն ապատա-կութիւն և գերեվարութիւն: Հայրն Մելքե Եկանայ լինելով յերկրէն վրաց՝ վարդապետն Ղուկաս, և ինքն կրօնիւ ի դաւանութենէ լուսաւորչական: Երբև եատս ի լեռնաբնակացն եթէ չդադարէ բնաւին վնասաբերութիւն, յանձառութենէն և ի յերկիւղէն առեալ զմիակ որդին իւր Եկանն, անդէն փախուցեալ և եկն յերկիրն Աղուանից. ի բաղում տեղիս շրջելով չգտեալ բաւ բարեհաճու-

թեան իւրոյ ուրեք դտեղի ինչ դադարման: Մինչև եկեալ եգիտ զվայելչագարդ տեղի ինչ զգիւղաքաղաքն Դող: Անդանօր արք աստուածասէրք և բարեպաշտք ըստ բնական օտարասիրութեան իւրեանց ժողովեալ արարին կարգադրութիւն յաղագս բնակելոյն նորա ի բնակութեան իւրեանց. վասնորոյ շինեցին զմի ամբագոյն կամարաշէն սենեակ առընթեր սըրբոյ Յօհաննու եկեղեցւոյն վասն ի նմա բնակելոյ վարդապետին Ղուկասու. և այլ ուր որդւոյն Եկանայ: Զկնի աւուրց ինչ ժամանակաց տեսին զի օր ըստ օրէ, ըստ բնական բերմանցն, յաջողութեան և իւր քաղաքավարութեան շնորհիւն գտանէր Եկանն զշնորհս առաջի հասարակութեանըն, երբև տեսին զառաջադիմութիւն նորա յամենայնի. կացուցին զնա պաշտօնատար բնակութեան իւրեանց. և նա ստանձնեալ գործն, ըստ բարեհաճութեան հասարակութեան կառավարէր, և սէրայօրդոր բանիւ զամենեցունց միտս և հոգիս առ ինքն քաղցրութեամբ համոզէր. ուստի պատուեալ եղև յամենայն անձանց. վասնորոյ ցանկացան մեծի իմն աստիճանի արժանացուցանել ըստ գործոյն:

Ի փոքր ինչ ձեռագրի քանի տեղեկութիւնք գրեալ: Բայց անվերծանելի վասն ռամկավար բառի ի տառ Եկանայ:

Գրի այսպէս. Թէ մինչ երկիրս ընդ տիրապետութեամբ պարսից իշխանութեանն կայր, ի Թուականին հայոց ռճհա էր, եկն համբաւ յայնկոյս կողմանցն Կուր գետոյն, թէ գուգարացիք (այսինքն Տաքեցիք) միաբանեալ են ընդ լեռնաբնակ ազգին լեզկաց՝ չծառայել բնաւին իշխանութեան Պարսից և չտալ զպայմանեալ զաքքունական հարկսն: Նաև՝ զսահմանապահ և պահապան զօրս բնաջինջ են արարեալ. մնացեալքն մաղապուրծ զերծեալք ըստ հարկին ստիպելոյ շուտափիր արագութեամբ հասեալ ի Տավրէժ քաղաք. և անդ զամենայն եղեալ իրսն և վնասս կոտորման պատմեալ իւրեանց դատաւորին. և նա ըստ բնական հպարտութեան իւրոյ այլադունեալ՝ կամէր ի նմին ժամու թափել զմաղձն դառնութեան յերկրին յայնմիկ. բայց կամեցաւ ըստ օրինի ազդ առնել Նադիր շահին. իբրև յայտնեաց զամենայն եղեալսն, և նա սաստիկ իմն հրամայեաց սկզբնաւորել զզօրս հաւաքման, զի ի գալ գարնանայն

ջերոտ եղանակին, եկն բանակն պարսից զօրացն սփռեալ տարածեցաւ յերկրին Փայտակարանաց. և ծածկեալ փակեցաւ զերեսս երկրին յայնկոյս Երասխ գետոյն. անդէն հետզհետէ հեծելազօր գունդս արձակեալ սուրհանդակօրէն, արեացն յառաջ խաղային ի հարթածաւալ և ի լայնարձակ դաշտի արցախեանս երկրի: Զկնի քանի մի աւուրց ըստ յաջողութեան եղանակին գարնանաբեր, և քաղցրաշունչ եղանակին զուարճագեղ բերմանցն օդոց, յանկարծօրէն ի գիշերապահ ինչ ժամու չու արարեալ սրընթաց արագութեամբ խաղաց և եկն յայսկոյս Երասխ գետոյն ի դաշտ իմն խոտաւէտ և ծաղկանկար. որ է յարևելեան ոտն բլրոյն բազմահատ նահատակին Ցակովկայ: Եւ ըստ հրամանի արքունի զօրապետն ի Հայոց ազգէն ընդ Նոցա իշխանութեամբ եղելոցն սկսաւ հաւաքել զընտիրս ընտիր յարեացն և ի քաջաց. ամենեքեան կորովիք և քաջամարտք կրթեալք ի մարտ պատերազմի. այնքան ընտիրք էին և գեղեցկահասակ ի դիմաց և ի գեղադարդ տեսակաց իւկ և իսկ զարմացեալ էին զօրքն պարսից և զօրապետն: Նաև ըստ խընդ-

բանաց երիտասարդաց Հայկազն զօրաց արարին յիւրեանց վերայ զօրապետս մեծ նախարարն Եկան․ զկնի բոլորելոյն զթիւ զօրացն Հայոց հազարաց հնգից և վեց հարիւրոց։ Զուեալ անուի բանակն զօրաց՝ խաղաց՝ գնաց ուղղակի յեզր Կուր գետոյն։ Իբրև լուան լեռնաբնակքն և Գագուրացիք․ զի կազմ և պատրաստք էին ի վաղուց անտի առ ի ճակատ։ Իբրև յերկոցունց կողմանցն խմբեցան ի յասպարէզ մարտի, անդ էր տեսանել պատահելն քաջք քաջացն․ աղաղակք զօրացն և ձայնք հրացանացն՝ և շողել սուսերացն և գափինք ոտից սրընթաց երիվարացն արգարև և խսկ վայլին թնդայր՝ և վատասիրտքն հրաժեշտ տային։ Ուրոյն անցեալ ի մի կողմ առանձնաբար քաջամարտք զօրքն Հայոց յանկարծ արձակեցան ի վերայ զօրացն հոնաց զմեծ մասն նոցա ի տապաստ յերկիր արկին․ զի այնպէս խմբեալ առ յոր կողմ արձակեալ գնային․ և նոքա ի յահէ անտի նոցա հալածական լինէին։ Մինչև ցայսօր տակաւին յիշեն անդանօր արարեալ քաջութիւն Եկանայ հանդերձ Հայազուն զօրօքն և որք տեսին զքաջութիւն Եկանայ, յայտ-

նեցին զօրագլխոյն և անդ արարեալ գըլխաւոր և տուեալ զմեծութիւն իշխել Դիզակ նահանգի․ ուստի կոչեալ զանուն նորա Մելիք Եկան․ անդ առաջի ամենայն զօրաց և զօրապետաց ընկալեալ զնախարարութիւն․ և քաջազուն զօրացն Հայոց տուեալ իւրաքանչիւրոցն զյաղթանակ մարտին զպարգևս ազնուագին։ Նաև բազում մխիթարական և սիրայորդոր բանիւք քաղցրալուր քաջալերեալ զզօրս Հայոց մնալ յաւէտ յայնպիսի քաջասրտութեան։ Եւ ինքն դարձ արարեալ անդէն գնաց ի սահմանս պարսից․ անդ թողեալ զմասն ինչ զօրաց իւրոց, և կալեալ զքանի մի մեծամեծ իշխանս ի լեռնաբնակացն և ի գագուրացւոց անտի ընդ իւրեանս կալեալ տանէին։ Թէև գրութիւնն չէր այսու եղանակաւ և ձևով կարգաւորեալ, բայց և ես ըստ իմում կարի յայս ինչ ձև փոխադրեցի ի դիւրութիւն ընթերցասէր անձանց․ զի անվերծանելի էր գրեալ տառիւքն և բառիւք։

Ընթերցողք բանիս և լսողք հայցեմ յիշել զիս զմատենագրողս յաղօթս ձեր։ Ի Տէր ամէն։

ԲԱՐԵԳՈՐԾՈՒԹԻՒՆՔ ՄԵԼԻՔ ԵԿԱՆԱՅ

Զկնի վերադառնալոյն մեծի սպարապետին զօրացն պարսից յերկիրն իւրեանց, վերստին խմբեցան և գումարեցան բարբարոս լեռնաբնակք ազգքն լեզկաց. խորհուրդ արարին ծածկապէս ընաջնջ առնել զերկիրն Աղուանից. և ընակութիւնս նոցա զամենայն հրձիգ առնել. (ըստ նախկին նախանձութեան, զոր կոտորեցին Հայք ի մարտին զզօրս Հոնաց,) մարդախանձ և արիւնարբու զօրքն հաստատուն պահելով զդաշինս իւրեանց. յանկարծակի եկեալ ի սահմանս Մղանւոյ, ուր խառնին երկոքին գետքն մեծամեծ Կուր և Երասխ ընդ միմեանց. և անտի անցեալ յայն կողմն գետոյն բանակն Հոնաց, և անտի դաշտ զառիվեր գնալով մինչև ի սահմանս Ղափանու. և անտի յանկարծ անցեալ յայս կողմն. և արձակեալ՝ սփռեալ՝ տարածեցան անկանելով զլերամբք և զընակչօք. կալան զամենայն անցս և զամուր տեղիս, զի հմուտք էին լեռնաբնակքն այնպիսեաց վայրից և

քաջավարժ յամուր տեղիս շրջելոյ և մարտնչելոյ. բազումք աւերեցին ես անտեղեակ գոլաման նոցա, պաշարեալ ի գործս անդակնս, եթէ լուան զաղաղակ մայրնն և անձնն գիտնաստականն սփռեալ և թասնեալ ի յանտառան վայրս և ի մայրուտ տեղիս հետ զնեալ եկեալ բազմայն. և խուռն ընթանային ի յամուր տեղին թաքչել. բայց վասն յանկարծ գալստեան նոցա չէր հնար զերծանել: Ուստի ոմանս գիտնաստականն և զյուռեալսն կամ ուր ուրեք ամրացեալք կային գտանել. անդ էր տեսանել անգութ գաղանայ ածանելն և զամենս պատառելն. և ոմանց զգլուխն բառնալն: Նաև զոմանս ի ներքոյ անտառախիտ ծառոց և թփոց սպանեալ. և գետթաւալ անդ թողեալ գնային: Անջատեալ որոշեցին զբազում գեղեցիկ աղջկունս և զմանկունս. գերեցին զանթիւս. և զայլս փայտակերտ շինուածս զամենեսեան քանդեալ հրձիգ արարին. զի այսու վնասաբերութեամբ և գերեվարութեամբ եկին մինչև ի բերդաքաղաքն Դող. բայց փութով ցածոյց զբռբոքեալ բարկութիւնս նոցա մեծ նախարարն մեր Մելիք Եկանն:

Բազում մեծամեծ պարգևօք և զանազան ընծայիւք, քահանայիւք և վարդապետօք եկին ընդ առաջ նոցա, որպէս ինքն գրէ յայտնապէս ի դրան կառուցեալ սենեկի ի ճակատս կոփեալ և քանդակեալ քարանց, թէ զոր ինչ ունէի՝ ետու անողորմ ազգին այնմիկ և բազում գերիս ազատեցի: Մանաւանդ ի գաւառէն Մելիք Պաղըն Վարանդու առաւել քան զևս. բազում պարգևօք և թանգագին ընծայիւք և որքան ձեռնհաս եղև ոսկի և արծաթ առեալ և ել ընդ առաջ նոցա. և զերծոյց ի ձեռաց նոցա զգաւառս իւր և զմնացեալ գերիսն: Բայց զբոլոր աւարս առեալ խաղացին առ ի Դրտու գետն (այսինքն Թառթառ) և զվիճակս որբոյն Գանձասարայ ունայն և թափուր արարին ի մարդոյ և մինչև ի յանասուն զամենայն աւար առեալ գնացին վասն մեղաց մերոց. և զմնացեալ խայտառակութիւնս չէ արժան ի պատմութիւն անցուցանել...

ԵՐԿՐՈՐԴ ԵՐԱԽՏԱՒՈՐՈՒԹԻՒՆ ՄԵԼԻՔ ԵԿԱՆԱՅ

Մեծ նախարարն Մելիք Եկան հանապազ շահէր զմիտս թագաւորին Պարսից յաղագս խաղաղութեամբ պահելոյ զերկիրն և զազգս Հայոց. բազում անգամ Հայազուն զօրօք հասեալ է յօգնութիւն ի նեղութեան ժամանակի Նադիր շահին ի պաշարմանէ արտաքին թշնամեաց պատերազմի. և արարեալ զբազում քաջութիւնս և յաղթութիւնս ի ձեռն քաջակորով Հայկազեան զօրաց: Նաև ի սղութեան ժամանակի զօրացն պարսից վասն կերակրոյ և այլ ինչ, կարևոր ինչ պիտոյից հասուցեալ անդ ի նեղութեան զօրաց զցորեան և զզէնելիս: Մանաւանդ ի մեծի տօնի պարսից սովորութեան, և ի յաւուրս ուրախութեան գնացեալ մեծամեծ ընծայիւք և ծանրագին իմն պարգևօք յայնքան երկայնաձիգ ճանապարհ ի տեսութիւն շահին Պարսից յաղագս խաղաղութեամբ և խնամակութեամբ պահպանելոյն զազգս մեր: Նաև բա-

գում գերեալ մանկունս և աղջկունս ազատեալ ի պարսից տէրութենէ և բերեալ յերկիրս մեր։ Քանզի ունէր բնական գութ և սէր հայրախնամ առ յազգս իւր. մանաւանդ՝ անանկաց, այրեաց և որբոց։ Դարձեալ զբազում հին քայքայեալ եկեղեցիս և վանորայս նորոգեալ. և ի յաղքատ բնակութիւնս Հայոց զնորս կառուցեալ շինէր և զգեստս կամ զխաչս և այլ սրբազան արարողութեամբ պականելի սպասս ընծայէր մերկ և աղքատ եկեղեցեաց։ Նաև՝ առաքէր ի հեռաւոր ուխտատեղիս ընծայս և պարգևս վանականաց և կրօնաւորաց. բաց ի սոցունց այլև զանազան բարեգործութիւնս արարեալ յազգս մեր և ապա կնքեալ զցանկալի կեանս իւր, գնաց ի հայրենիսն իւր։

Ո՞վ յաջորդեալ զկնի մահուան նորա։ Գրի ի յերկրորդ տապանաքարի այսպէս.

Այս է տապան քաջ իշխանին.
Մելիք Արամ մեծ պարոնին.
Էր սիրական Նադիր Շահին.
Նախ վախճանեալ Հայր սորին.
Որ սափաղար ունէր նոյն Շահին.

Երբ որ մեռաւ հայր սորին.
Տուգան առաւ ի յԱրամէն.
Զվեց հազար թումանն.
Նա ուրախ սրտով առաքեալ.
Ցես միոյ ամի վախճանեալ
Ի ոճղդին աստ եդեալ։

Կարևորագոյն համարիմ տարակուսեալ անձանց ստոտանօր բացայայտել զտուգան ստացեալ բառն. Թէ արդեօք ընդէ՞ր Թագաւորն պարսից յանկարծ դարձոյց զերեսս իւր յորդւոյ Մեծի Մելիք Եկանայ։ Ըստ խնկութեան բանից բացայայտելոյ այսպէս՝ ստուգեալ։ Նախ քանի մի տեղեկութիւնս ի սկիզբն ճառիս դիցուք և ապա զխոստացեալ բառն ունիմ բացատրել։

Քանզի Թագաւորն պարսից՝ Նադիր Շահն ունէր միակ միամօր որդի ի պատահարաց ինչ ցաւակիր եղեալ՝ անկեալ հիւանդացաւ. և ի բժշկաց չկարացեալ գտանել զհնարս բժշկութեան. զկնի բանի աւուրց անդառնալի մահուամբ անկեալ վախճանեցաւ։ Ի նմին ժամու համբաւ տարածեցին ընդ ամենայն երկիր զի ողակից լինել ամենքն ընդ Թագաւորին իւրեանց. որք կան ընդ իշխանութեամբ

խուրեանց ի լսել զձայն համբաւոյն. ամենայն մեծամեծ իշխանք և նախարարք և պայազատազարմք եկեալ գումարեցան ի յապարանս մեծին Արամայ ի բերդաքաղաքն Դող. խորհուրդ առնել վասն գնալոյ և տեսութեան կամ ողահանութեան Թագաւորին պարսից. թէ որպիսի՞ ընծայիւք և պարգևօք հնարս կարիցեն ճարել. գնալ և տեսանել զԹագաւորն խուրեանց ըստ սովորութեան պարսից. Թերևս գտանել զշնորհս առաջի նորա ի ժամանակի նեղութեան և հալածանաց օգնեսցէ: Տակաւին ի խորհրդածութեան էին ամենքն առանց վճռահատութեան բանիցն. ի նմին ժամու կին մելիք Արամայ հասեալ ի վերայ կարգադրութեանց նոցա, չհաւանեալ վասն զի ինքն կարի իմն հնարագիւտ էր ամենայն իրաց. յառաջագոյն ըստ համբաւոյն գտեալ բազում խորհրդածութեամբ և պատրաստեալ էր զհնարս մխիթարական և բարեհաճոյ լինելոյ ոդաւորելոյն: Ուստի բոլոր իշխանացն և ամենամեծ նախարարացն ժամադիր եղև նոցա սպասել մինչև ցեօթն օր. յետ այնորիկ ըստ պայմանադրութեան իւրոյ առանց իրիք յապաղա-

նաց վերստին պատրաստ մնալ ի յատեան դատաւորութեան առն իւրոյ. նորա ըստ պատուիրանաց իմաստայեղոյ կնոջն հնազանդեալ արարին այնպէս. զկնի եօթնեկին վերստին խուռն բազմութեամբ եկեալ ի յատեան ամենեքեան սպասէին նոր իմն համբաւու. ի նմին ժամու ել կինն իմաստախոհ. նշմարէր ներքին աչօքն նկատմամբ ամենեցունց, վասն զի յականէ յանուանէ ճանաչէր զամենեսեան, ոյք իցեն արժանաւորք և ընդունեակ՝ Թագաւորական գործառնութեան, կամ այսմ ահաւոր պաշտօնի. և ապա եմուտ ի տուն. և առաքեաց զծառայս իւր՝ հրաւիրել ի ներքս նշանակեալ ազնուաշուք իշխանսն և զնախարարսն, ըստ իւրոյ ընտրութեան, եբեր ի ներքս և մերկացոյց զհանդերձս նոցա, զգեցոյց զսևագոյն հանդերձս յոտից մինչև ցգլուխս նոցա. սոյնպէս և ծառայից և երիվարաց. և ինքն զգեցաւ նոյն գունակ. և ևս ազախնոյ իւրոյ. հուսկ յետոյ առն մելիք Արամայ: Ամենեքեան հաւասար սևազգեցաց նոր իմն այլանձև կերպարանօք խմբեալ և կազմեալ ստուար գունդ մի. և տուեալ զհամբոյրն աջակցու-

թեամբ հրաժարական ամենեցունց յու-
ղի անկեալ առաջնորդութեամբ հրեշտակի
խաղաղութեան դիմեալ գնացին ուղ-
ղակի մինչև ի Տավրէժ քաղաք. և անդ
խմբեցան ամենեքեան ի յարքունական
թատրոն: Իբրև տեսին արք քաղաքին
այնմիկ, գումարեցան յամանայն կողմանց
յայն ինչ տեղիս բազմութիւնք յոյժ ամ-
բոխից ի պարսկական և յայլոց ազգաց
տեսանել զի՞նչ է այնու ինչ օտարաձև
կերպարանօք երևիլն. նաև անդ էին ան-
ձինք արքունական պաշտօնատարք հազա-
րաւորք սքանչացեալ ամենեքեան ի նորա-
գոյն տեսարանաց նոցա. ըստ պահանջե-
լոյ հարկին քանի մի մեծարգի իմն ան-
ձինք իսկոյն մտեալ յապարանս արքունի
ծանուցին Թագաւորին, թէ այսու ինչ
սևազգեստ կերպարանօք գունտ մի արանց
և կանանց ահա սպասեալ կան ի թատրոն
արքունի հրամանի Ձերոյ. եւ հրաման
ի նմին ժամու բոլորն գալ այնու ինչ
զգեստուք ի տեսութիւն իւր: Նոքա
իբրև լուան ըստ հրամանի նորա փութա-
ցեալ պատրաստեցին զպարգևսն և ետուն
ի ձեռս ծառայից իւրեանց. և մտին ի
ներքս ըստ սովորութեան Պարսից օրի-

նացն. և կրկնապատկելով գլուխ խոնար-
հացուցին. և մնացին ի սպասու հարց-
մանն: Թագաւորն յանկայր տեղեկանալ
ուստի սկսաւ ընդ հարցաքննութեամբ
արկանել զնոսա սակայն ի վաղուց պատ-
ուիրեալ էր կինն Մելիք Արամին՝ իշխա-
նացն մի ոք վստահացեալ ձայն արձակեցէ
անդանօր առաջի Շահին, ասէր, գուցէ
սխալաւոր բանս խօսիցէ թէ լինիցիմք ծաղր
առաջի նոցա. եհարց Թագաւորն, թէ ըն-
դէ՞ր այդու սևազգեաց փոխակերպու-
թեամբ էք եկեալ յերկիրս մեր, կամ
ուստի՞ էք: Անտի առեալ կինն Արամայ
աներկիւղ և առանց շնչարգելութեան
պատասխանէր: Թէ արքայ, աթոռակալու-
թիւն Ձեր հաստատուն եղիցի յաւիտեան,
իբրև եկին համբաւ աղէտալի և հնչեաց
յերկիրս մեր, թէ վախճանեալ է շքեղա-
շուք և մեհազնեայ անդրանիկ որդին Ձեր
դի և իսկ աւանդութիւն ունիմք հնական
Հայկազեանս ազգի ի նախկին մեծամեծ
նախարարաց անտի և սպարապետաց
ետուն աստուածահաստատ և երջան-
կափառ օգտաւորեալ Թագաւորի այսու
սգազգեաց զգեստուք գնալ ի տեսու-
թիւն. և մեք հնազանդելով նախահարցն

մեր օրհնաց և պատուիրանաց և մեք զնոյն տրտմահաղորդ ցաւակցութիւնս սգաւորութեան Ձերոյ տուեալ եմք յանկեաբելի երախտապարտութեան Ձերմէ առանց ինչ արգելանաց բանի կատարել: Արդ, եթէ բարեհաճեսցին կամք երջանկագարմութեան Ձերոյ գիտել և ճանաչել զերկիրս մեր. այժմ եմք և կամք ընդ Ձերով հզօր և անյաղթելի իշխանութեամբ. որդիք Հօրդ բազմախնամ յերկրին Աղուանից և ի նահանգին Դիզակու. շահն իւր մնացեալ էր հիացեալ ափշութեամբ, վասն զի ըստ բնական բերմանցն և ճախարանութեան այնպէս արշաւելով ճարտարաբանէր պարսկական լեզուախօսութեամբն. եւ ձայնն ի վեր սաստելով. զի ամենայն մեծամեծք և նախարարք արքունին ի հիացումն էին մնացեալ. թագաւորն զուարճանայր ի պերճաբանութեան, վասնորոյ զանազան առարկայս խօսակցութեան յառաջ արկէր վասն ախորժելոյ պերճաբանութեան. և անկասկած իմն պատասխանէր. չէ արժան և յարմարագոյն ստանօր երկարաբանութեամբ կիսատակել զամենայն բանս խօսակցութեան նորա. իբրև արձակեցան

անալ և ելին ի պատրաստեալ տեղի արքունի, անդանօր զաղարս առեալ զգիշերն:

Ցառաւօտեան պահուն յառեան նստեալ Շահն սաստիկ իմն բարկութեամբ կոչեալ զամենայն զօրագլուխս և պետս և զնախարարս և զգործակատարս և զգլխաւոր իշխանս և զամենայն պաշտօնակատար անձինս. իբրև գումարեցան անդ, սկսաւ յանդիմանել զամենեսին՝ թէ տակաւին չէ՞ք հասեալ ի չափ միոյ կնոջ՝ հանճարոյ Հայազնու. զիա՞րդ կարեցէք զբարձրագոյն արքունի պաշտօնսն անթերի և անխոտոր իմն կարգաւորութեամբ կատարել. ուստի ի նմին ժամու հրամայեաց զանձապետացն արքունի առաջի ամենայն բազմութեան բերել զծանրագին—զխպակս ոսկեփայլ և ականակապ: Եւ ակնս թանկագին և պատուականս տալ Տիկնոջն հանճարեղ և համեստափայլ. նաև հանդերձս նորագոյն և արծաթապատ և զկամարս ոսկի ածին ընդ մէջ նորա: Նոյնպէս Հայազուն ընտրեալ իշխանացն ետ զպարգևս իւրաքանչիւրոց ըստ ընդունակութեան նոցա և արժանաւորութեան:

Մնայ ինձ աստանօր գրել և յայտնել զաղետալի պատմութեան միոյ չքնաղագեղ աղջկան որ և ընդ իւրեանս տարեալ ընծայ Թագաւորին. և թէ որպէս ազատեցաւ: Զէր արժան խառնել ընդ նախընթաց պատմութիւնս և առնել զճառն կարկատուն և անախորժ:. :. :.

Թերէ կարգ պատմութեանս աստանօր մեզ ասել, զի յառաջ քան զայն ամենայն զիպուածսն Թագաւորին պարսից՝ եկեալ էր յարքունուստ հրովարտակ ինչ անվերծանելի և անախորժալուր ի վերայ մեծամեծացն Հայազուն իշխանաց. և ի նմա գրեալ պատգամս այս. Թէ ո՛վ Թիկնապահ և հաւատարիմ պայազատազարմացդ և մեծամեծ նախարարացդ Ատրպատականդ երկրի ողջոյն: Մինչև ցայսօր ի չափ անձին կարողութեան ձերոյ առանց անհնազանդական հոգւոյ և խոտորելոյ դաշնադրութեան մերոյ հանդարտութեամբ իսկ ծառայեալ էք արքունի հրամանի. արդարև իսկ գիտեմ այժմ ևս ի նոյն հպատակութեան հաստատուն կայք. մնայ ինձ յայտնել ձերով ապաստանութեամբ. զի ընտրել և ճանաչել զմիտս և խորհուրդս անխօս կոյս

մի աղջկան. բայց գեղեցկութեամբ աննման իցէ երեսօք և տիօք. հասակաւ գեղեցկայարմար և վարուք և բարուք գովանի. ամենայն կարողութեամբ բարի անարատ և անթերի. միայն գեղեցկութեան չկարիցէ մարդ գտանել համեմատ. միանգամ Թագաւորութեանս անուան իցէ յարմար: Զի յայնժամ սովորութիւն էր անօրէն բռնաւորացն զայնպիսի անպատկառ չարագործութիւն առնելն: Ողորմելի Հայքն մնացին ի մեծի վտանգաւորութեան, նկատելով արքունի հրամանին և նկարեալ զարմանալի պատկերին. Թէ զի՞րդ իցէ մարդ հողածին այսու պատկերակազմութեամբ լինել. զի ընդ հրովարտակին արքունի առաքեալ էր ոսկեզօծ նկարեալ իգական պատկերն: Եկին ամենքն գումարեցան ի յապարանս մեծին մելիք Եկանայ յաղագս խորհրդածութեան և հրամանակատարութեան Շահին. ի վերջ նոյն քննութեան սկսան ամենեքեան շրջել ի նահանգն Դիզակու և յուզել զամենայն բնակութիւնս. նաև տանէ ի տուն. բայց չկարացին ըստ պատկերի ձևոյն գտանել, մնացին ի մեծի տրտմութեան. յամենայն

կողմանց անճարայան: Բայց յաղգս Մելիք Եկանայ կայր գեղեցկագոյն օրիորդ մի քան զնկարագրեալն պատուականագոյն. անուն նորա Մարիամ. և ինքն հնգետասան ամեայ. մինչև ցայն ժամանակն անել մնացեալ ի տան վասն այնպիսի արկածից և չար պատահարաց. զի յայնժամ երևելին այնպիսեաց ի մէջ հատարակացն մեծ իմն կասկածանս ունէր. զի ժամանակն չար էր. բռնութեամբ քարշեալ տանէին: Անցուք ի կարգ բանիս: Բայց աղջիկն էր գովանի վարուք և բարուք և ունեալ զահաւիկ ինչ ուսումն գրոց: Սակայն չունէր ուրուք վստահութիւն և քերել յանձն զի կարիցէ յիշել զանուն չքնաղապանծ օրիորդին. իբրև յուսահատեալ անճարացան յամենայն կողմանց, ժողովեալ միահամուռ ամենայն գլխաւոր անձինք, եկեալ աղաչանօք յայտնեցին Մելիք Արամայ զխորհուրդս իւրեանց. թէպէտև նա մնաց ի տրտմութեան և ի տարակուսութեան. բայց անհնարին էր հրաման թագաւորին չկատարել. իբրև ետես ամենեքեան մնացեալ յանդերձանելի վտանգաւորութեան ի խիղճս անկեալ ինքն ևս յօ-

ժարեցաւ ի խորհուրդս նոցա վասն աղջկանն. ասելով թէ, կոչեցէք մայրն նորա և տեսէք զորպիսի պատասխանս ունիք տանել զաղջկանէն. կոչեցին ճոխարան Տիկինն անդ. չկարէր ոք բանս ինչ արտաբերել և ծանուցանել զխորհուրդ ինչ յաղագս անկեալ նեղութեանցն ի Տիկնոջէն: Ասէ՝ ամենեքեան մնացեալ են ի վարանման տրտմութեան, մելիք Արամն, զի ազգ մի վասն միոյ աղջկան չէ արժան կորնչել. ուստի արժան համարիմ լսել և կատարել զաղաչանս ազգինքո. և հնարիւք իմն համոզել և պատրողական բանիւք յօժարացուցանել զաղջիկն. թերևս կարիցեմք ազատել յազգս մեր ի բռնակալութեան Պարսից: Խոհեմ Տիկինն քաջալերեալ զամենեսեան ասէ. մերկացուցէք ի մտաց ձերոց զմէգ տրտմութեան և երկբայութեան. զի ես արարից առանց իւիք խափանուածոյ զկամս ձեր: Ամենեքեան ուրախացեալ ելին և գնացին: Ճարտարախօս կինն կոչեալ առ ինքն զաղջիկն, սիրայորդոր բանիւք քաղցրացոյց զմիտս նորա. ունելով առ ինքն իւր ընկէր և զբուցաբան ի յերկայն ճանապարհին. նաև մեծ իմն շնորհունակ անուանէ մերս աղ-

զի այդպիսի բարեվայելուչ չքնաղագեղ
պայծառութեանց․ զի սովորութիւն է
պարսից ազգին կանանց գալ և ժողովել
առ ի տեսանել զհայոց ազգին հարսունսն
և զաղջկունսն․ զի մեծ ինչ պարծանաց
անուն է վասն գնացեալ նախարարացս․
ողորմելի աղջիկն հաւանեալ բանիցն ետ
յօժարութիւն․ իբրև լուան արտաքինքն,
թէ ընկալաւ զբանս Տիկնոջն և ահա տայ
ընդունակութիւն գնալոյ յերկիրն պար-
սից, արդարև ուրախացան յուրախու-
թիւն մեծ, թէև ընդդէմ օրինացն էր․
վասնորոյ զանխուլ ի Նմանէ պատրաստե-
ցին զամենատեսակ զարդարանս․ զհան-
դերձս պայծառազարդ ոսկով և արծա-
թով շրջապատ շարամանեալ և զքառա-
մանեակն ընդելուզեալ մարգարտով ար-
կին ընդ պարանոց նորա․ և գօտի կամա-
րաձև և արծաթապատ, և ոսկեզօծ աղ-
խիւք մասնաւորեալ զանազան այլատե-
սակք պայծառութեամբ զարդարեցին՝
մինչև անգամ կարող եմ կոչել զնա իս-
կութեամբ երկրորդ Յուդիթ․ փայլէր
ինքն և երևան ի մէջ աղջկանց, որպէս ա-
րուսեակն ի մէջ աստեղաց․ զի այսու
պայծառազարդ ինչ պաճուճանօք և տար-

փայլի տեսլեամբ ըստ նախընթաց պատ-
մութեան ընդ իւրեանս տարեալ էին առ
ի մխիթարութիւն պարսից թագաւորին։
Իբրև աւարտեցան ամենայն գործք իւր-
եանց արքունի, ըստ յայտնելոյ Շահին
զբերելն աղջկան․ զի և ժամանակ էր ցու-
ցանելոյ նման զաղջիկն․ թէպէտ յերե-
կոյին զկնի կերակրելոյն ի բերանս իւր-
եանց այլաւանօրէն ընդ միմեանց խօսէին․
սակայն յառաջագոյն մի ոմն մտերիմ
աղախին Տիկնոջն մեծին Աշամայ յայտնեալ
էր աղջկանն, զի էին անբան սիրով կա-
պեալ ընդ միմեանս մանաւանդ ի յոտա-
րութեան այնքան կաթոգին սիրով միա-
ւորեալ էին․ որպէս մի հոգի յերկու
մարմինս․ ցյայտնելն գիտէր ի վաղուց ա-
ղախինն, բայց չկամեցաւ յայտնել․ միայն
գիտէր յետագայ ցաւակրութիւն սիրեցե-
լոյն․ ուստի անմխիթար հոգւով և զգա-
ծեալ տրտմութեամբ հայէր յերեսս ամե-
նագեղեցիկն Մարիամայ իսկ և իսկ կոտո-
րէին զաղխն․ և ի հառաչելն հոսէին յա-
չացն յորդ արտասուս․ վասն զի ժամա-
նակն և ժամն մերձ էր տալոյ բռնաւորին։
Սրբասնունդ կոյսն հասեալ ի վերայ ան-
մխիթարական հառաչանաց ընկերին իւրոյ,

եհարց մեղմաբար. թէ աղաչեմ զքեզ, ո՞վ օրհնեալդ իմ, ե՛կ յայտնեա՛ ինձ անբաւժելի ցաւդ մտաց քոց. չկամէր յանկարծօրէն ծանուցանել օրհնելոյն Իւրոյ. բայց նա չկամէր զաղտնիսն ամենևին արձակել ի ձեռաց Իւրոց. ի վախճան բանիցն երդմնեցոյց զընկերն, թէ անհնարին է արձակել ի ձեռացս, եթէ չյայտնես աղեխարշ հառաչանս քոյ տոչորմանդ սրտի. ի նմին ժամու ո՛չ ոք էր ի տան, զի ամենեքեան հրաւիրեալ էին ի յընթրիս Թագաւորին, զի միայն երկուքն էին ի տան, ուստի արտասուաթոր և ողբալի ձայնիւ ծանուցանէր. թէ ո՞վ աչացս լոյս, ո՞վ հատոր հոգւոյս, չզօրէ լեզու իմ ասել թէ փոգն անշուշտ ունին ընծայել զքեզ պալատից Թագաւորին. իբրև լուաւ մաքրամիտն Մարիամ անլսելի գոյժն, իսկոյն շրջեցաւ գոյնն երեսաց. որև իսկ տեսանողք անմարմին զնա համարէին. մթացան աչքն մեղուշակ. ձեռքն և ոտքն յողալոյծ թուլացան. դարցոյց զերեսս Իւր առ որմն տան. կալաւ յուռիցն մինչ ցգլուխն կայծակն անշէջ. գալարէին աղիքն և մրձկեալ տոչորէր սիրտն. ո՞վ կարէ ընդ գըրչաւ փակել արդեօ՞ք և ի պատմութիւն

անցուցանել հասումն արտասուաց և հառաչանս սրտին, հիւանդանալ. ստատնօք ագատաքայլ գրիչս մանրամասնօրէն գրել զգիպուածս նորա մտացն, զի ջեռնեալ էր յորմնամած սիւն տանն և գրկեալ ձեռօք և խոնարհեցուցեալ զգլուխ Իւր ի վերայ նորա. անհնարին էր ի նմանէ հեռացուցանելն. իսկ յերեկոյի զկնի ամենայն իրացն ուրախական յարեան ամենեքեան և ընկղմանեալ ի քուն մտին, թողին այնպէս գրկեալ զսիւնն. վասն զի բերան մարդոյ չզօրէր խոստութեամբ խօսել ընդ նմա, զի արդարև այլատեսակ իմն երևէր յաչս մարդկան. անպատմելի ունէր պարկեշտութիւն և հնազանդութիւն. ցելանել ի բերանոյ բանք, մարդոյ յակսն թոթափելն տեսանէր կանգնեալ ի վերայ ոտիցն, սպասէր առ ի յաւարտել բանիցն, եթէ իւրապատկան իցէ, իսկոյն ունի ի նմին վայրկենի բոլորել: Անցցուք ի կարգ ցաւակցութեան նորա: Իբրև ամենեքեան ի քուն հատատրեցան, անցոյց զլուցեալ ճրագն. և յինքենէ հանեալ մերկացոյց զզարդարանս. և ոքող գլխոյն ի բաց եդաւ. անկաւ ի գուճս ունելով իւր օգնական յանդերծանելի նեղութեան օգնո-

տափառ սուրբ կոյսն Մարիամ․ ո՜վ կարէ պատմել զաղէտալի ցաւ սրտի Նորա և զկսկիծ մրմնջողական մտացն, բերանոյ հառաչումն և ողբ լեզուի, ձեռաց կոծումն. անկանէր երբեմն գետնամած թըմբութեամբ և երբեմն ի կանգուն կամ ի վերայ ծնկացն․ լայր և աղաչէր խնդրելով ի սուրբ կուսէն, զի մի ձեռամբ անօրինաց ապականեսցի կուսութիւն․ եթէ աղատիցի ի բռնաւորէն, մտանիցէ յանապատ կուսանաց, որ էր առընթեր բերդաքաղաքին Գողու․ առանց ննջման զբուն իսկ գիշերն լայր և ողբայր մինչև յառաւօտն․ երբև ետես, եթէ մերձ է ծագելն լուսոյ առաւօտեան, ցյառնել յանկողնոյ արանցն և կանանց, աղջիկն փութացեալ զգեցաւ զհանդերձս իւր և ըստ սովորութեան իւրոյ վառեալ զճրագն և մնայ կանգնեալ ի վերայ ոտիցն։ Արկաւ զիւրև զզարդարանս անգիտելի յամենեցունց․ սպասէր երեկոյեան անլսելի համբաւայն․ ըստ ժամադրութեան բռնաւորին առեալ Հայազուն Նախարարքն զգառն անմեղ որբանունդն Մարիամ, տանէին յապարանս Թագաւորին այնու զարդարուն պայծառափայլ

հանդերձիւք․ ի ծագել արեգական կարմրացայտ արեւուն չկարէր ոք համարձակութեամբ հայել նշուլիցն արծաթապատ և ոսկեշար հանդերձից․ արդարև համայն պարոնիկք եղեալ եկին և տեսին․ իսկ և իսկ զարմացեալ էին ի չքնաղապանծ և պայծառափայլ զիմայն և յաղնուաշուք յանհեղատես հայեցողութեան աչացն մեղուշակ․ երբև գնացին յապարանս Թագաւորին, զի նստեալ էր բռնաւորն յատեան ի վերայ ոսկեզօծ աթոռոյ, յառաջ տարան մինչև ի Թագաւորն և ղեռազերծ զծածկոյթն արարին յերեսաց Նորա․ և Նա կանգնեալ յանդիման աչացն․ բայց ըստ բնական սովորութեան խոնարհեցուցեալ զգլուխն յերկիր հայէր․ Թագաւորն անդէն ձայնեալ՝ ո՜վ ընտրեալ աղջիկդ հարսնացու Թագաւորի, ի վեր հայեաց, զի տեսից զգովասանականդ քո երեսս․ զի բերան ամենեցուն գովեն զքեզ․ աղջիկն ըստ Թելադրելոյ հոգւոյն սրբոյ առեալ զպատասխան Նորին մեղմաձայն և սրտառուչ բանիւ՝ Թէ և դո՜ւ ի վեր հայեաց առ այն՝ որ իսկ գիտակն է ամենայն գաղտնեաց մարդկան, պարսկական լեզուաւ․ որպէս սուր Թափանցիկ մխեալ ի սիրտ

բռնաւորին, իսկոյն ի խստութենէն կակ-
ղացեալ, ասաց՝ այժմիկ քեզ տուեմ. բաց
բանից այդմիկ արձակեցի զքեզ յանար-
ձակելի կապանացդ, եթէ խախտողու-
թեամբ առ ծնողս քո ի մխիթարութիւն
նոցա. զի նոքա աղօթեսցեն վասն իմ, զի
տացէ ամենակալն արու զաւակ թագա-
ւորութեանս: Եւ անպատմելի խնդու-
թեամբ աղջիկն յերեսաց նորա. և եկն
առ սիրահարեալ ընկերն իւր. գրկեալ
զմիմեանս ի սաստիկ խնդութենէն արտեց
նոցա յորդաբուղխ հոսէին յաչաց երկո-
ցունցն ի շնչարգելութենէ մղձկեալ սըր-
տիցն հատան ձայն խօսելոյ նոցա: Եւ ա-
պա ասէ. Ե՛կ, ո՜վ հատոր հոգւոյս իմոյ,
տացուք գոհս տացուք անորգամե-
ծարին Աստուծոյ, զի ազատութիւնս չէ
գործ արդարև մարդոյ, այլ ամենակալին,
որ ազատեաց զիս յանխորտակելի և յան-
գերծանելի շղթայից: Եւ իսկ զարմանալի
իմն հրաշագործութիւն էր. վասնորոյ
ամենեքեան հիացեալ էին, թէ զիա՞րդ ա-
զատեցաւ անարատն ամենագեղեցիկ. ո՞վ
էր ձեռնտու՝ միջնորդ և բարեխօս ար-
դեօք: Զի զօրութիւն հսկման և տքնու-
թեան անդ առաջի պատուոյն երևե-

ցաւ. որ ի բուն իսկ գիշերին չկարաց
գտանել զդադարումն. ո՛չ ոք էր առընթեր
նորա, թերևս ցաւակից լինիցի. կամ մխի-
թարիցէ. կամ ի գետնամածութենէն բար-
ձեալ սրբեսցէ փոշաթաւալ զերես նորա.
կամ զարտասուս յաչաց նորա, և ունող
ձեռաց, որ կոծէր զկուրծն. նա էր մերձ որ
քննէր զծածուկս սրտի նորա, զի վերջա-
ցեալ էր յօգնականութեան մարդկան մի-
անգամայն յանձնարարեալ էր զինքն ա-
մենափրկչին Աստուծոյ, բաց մաղթանաց
սրբոյն Գրիգորի Նարեկացւոյն. որ ասէ,
յայնժամ է այցելութիւն քո՝ ողորմած,
յորում հատցէ ակնկալութիւն մարդոյ:
Թէև ազատեցաւ՝ եկն և կատարեաց զուխ-
տըն. եմուտ յանապատն ապաշխարո-
ղաց և եղև կոյս անուանի անարատ յա-
մենայն բամբասանաց. և գնաց յերուսա-
ղէմ և անդ շրջեալ յամենայն տնօրէնա-
կան ուխտատեղիսն, կատարեալ զփա-
փագութիւնս իւր. և վերադարձեալ եկն
ի տեղի իւր կացեալ անարատ մինչև ի
բարւոք ծերութիւն իւր և հանգիստ խա-
ղաղութեամբ ի քրիստոս տէրն և յոյսն
ամենեցուն: Տէր Աստուած ազատեսցէ
զամենայն հաւատացեալս ի հոգեկան և

մարմնական կապանաց մեղաց յանակնկալ ժամու իւրով մարդասիրական գթութեամբն. և փառաւորել ի մեզ ամենասուրբ երրորդութիւնս յաւիտեանս յաւիտենից, ամէն:

Մնայ ինձ զաւուգան բան յայտնել. զի ծառքն նախ զատեղունս արձակէն և ապա ի գագաթունս առնուն զպտղունս:

Մեծ նախարարն մեր մելիք Եկան ծերութեամբ և ժամանակաւ մեծացեալ էր քան զնադիր Շահն. իբրև ետես Շահն, եթէ ի բազում տեղիս նեղութեան հասեալ ի մելիք Եկանայ օգնութիւն անփոխադարձելի, վասնորոյ կոչեաց զնա կամաւ իւրով հայր. զի սովորութիւն է մեծամեծացն Պարսից և Թագաւորաց այդպիսի իմն մխիթարական բանիւ քաղցրացուցանել զմիտս հաւատարմաց իւրեանց: Զի յիմարութիւն մելիք Արամայ այն եղև՝ յորժամ վախճանեցաւ հայրն իւր և ոչ յայտնեաց Նադիր Շահին: Ի լսելն գրեալ հրովարտակ յարքունական դրանէ, առաքեալ առ որդին նորա Արամ, թէ եկն համբաւ յերկրէն Աղուանից զի հանգուցեալ Հայրն մեր մելիք Ե-

կան, զի միոյ Հօր որդիք եմք, առանց իրիք ինչ յապաղմանց զիմ եղբայրական բաժինն, որքան ինչ անկանի յինչիցն առաքել, զի պակաս քան զինց հազար թուման չէ արժան անուան նորա առաքել: Իբրև լուաւ զհրամանագրութիւն նորա, փութացեալ գումարեաց և բովանդակեաց զթիւ գրելոցն. և անյապաղ առաքեաց առ Շահն պարսից և ինքն զկնի միոյ ամի անկեալ վախճանեցաւ ի Տէր, ամէն:

Թէ ով յաջորդեաց զկնի մահուան Արամայ, յերրորդ տապանաքարի գրի այպէս:.:.:.

Այս է տապան քաջ իշխանին
Սայի անուն մեծ մելիքին.
Կարգեալ իշխան Նադիր Շահին.
Երեսուն երեք ամ տիրեաց Դիզակ երկրին.
Զքաջութիւն եւ զյաղթութիւն
արար բազում ձեռամբ նորին.
Ընդ անօրինաց էր հակառակ.
Ի սուր մարէր զթշնամին.
Ինքն պարթեւ եւ զօրաւոր,
Քան զառաջինսն էր ահաւոր.

Մինչ վաթսուն եւ վեց ամաց եղեալ
ի յաշխարհէս վերափոխեալ.
Էր ամսոյն նոյեմբերի թիւ կենաց կա ամաց
Քրստոն եւ եօթն յունուարն երեք շաբթի.

վախճանեցաւ Թւին ամ ին:

Ի յուլով տեղիս տակաւին յիշեն ծերունիք հինաւուրց հարիւրամեայք, ի նահանգին Դիզակու վասն հրաշից ծննդեան քաջին Եսայեայ, թէ իբրեւ ծնաւ ի մօրէն մանուկն Եսայի, էին մատունք աջոյ ձեռին նորա խաչաձեւ կորացեալ, և խփեալ և մածեալ ընդ կարկան ձեռին. իբրեւ քննութեամբ բացին. տեսին զի ափն կարմիր արեամբ, բազում գուշակեցին վասն մանկանն, թէ ի ձեռաց նորա բազում արիւնահեղութիւն լինի. իբրեւ եհաս յարփունս երիտասարդութեան և առեալ իշխանութիւն եղբօր իւրոյ, ի նմին ժամանակի անկաւ մեծ իմն հակառակութիւն ընդ Փանահ խանի Ջուանշիր գաւառին. այս ինչ հակառակութիւնն տևեալ մինչև ցեօթն ամ անընդհատ իմն շարունակութեամբ ընդ միմեանց պատերազմեալ յերկոցունց կողմանց եղեալ անթիւ արիւնհեղութիւն: Առ այս նախանձաբեկ

պատերազմ բազում նախարարք և մեծամեծ իշխանք միջնորդեալ ի խաղաղութիւն համոզեցին, բարձաւ թշնամութիւն ի միջոյ: Իբրև խաղաղացաւ ի բնական թըշնամւոյն, աներկիւղ վարէր զիշխանութիւն, ապա թէ չէ ընդ իշխանութեամբ պարսից. այնքան սաստկացուցեալ ի վերայ անօրէն ազգաց զչարչարանս և զտանջանս: Ի հատանելն զվէճ ինչ կամ զվճիռ չարագործաց և այլ ինչ մեղապարտ անձանց անհնարին էր զերծանելն ի ձեռաց նորա, ոչ կաշառօք և ոչ միջնորդական բարեխօսութեամբ. իւրաքանչիւրոցն ըստ չարագործութեան հատուցանէր պատիժ և պատուհաս. զմահապարտսն խեղդամահ առնէր. ոմանց զմի ձեռն հատանէր և ոմանց զաչսն հանեալ կուրացուցանէր. արդարև դողայր և սարսէր նահանգն, որ ընդ իշխանութեամբ նորա էր. վէճ և կռիւ կանանց մանաւանդ բարձրաձայնելն միանգամայն վերացուցեալ էր յամենայն բնակչաց. նաև գողութիւն, պոռնկութիւն, մարդասպանութիւն և այլ ինչ չար պատահարս բոլորն ի գաւառէն ի բաց հեռացուցեալ: Յիշեն իսկութեամբ թէ նորապսակ հարսունք և աղջկունք նշա-

նազրեալ մանկամբ մանրիկք ամսօրեայ ինչ ժամանակաւ բնակեալ մնային պարապելով ի գործս իւրեանց ի յեւղս մրգապահաց և այգեաց կամ յայլ ինչ անդական արդիւնաբար վաստակս։ Նաև ըստ պահանջելոյ ժամանակին արարմանցն, որև իսկ անմիջապէս պատահէր պատերազմ, ուստի որչափ ընդ իշխանութեամբ էին բնակիչք Հայք և Թուրք ընտրեալ զամենայն քաջազօտի երիտասարդս և զպատանիս յառաջ մատուցանէր ի Թատրօն խաղալոյ և զկարգ մարտի ուսանելոյ. և ես ի պատահել պատերազմի ընդ անօրինաց ամենեւին չդարձուցանել զերեսս. կամ անուն քաջութեան ժառանգել կամ ի վերայ Հայրենեաց մեռանիլ. բաց ի նմանէ մեռանիլն չէ արանց տուեալ այլ Թուլասիրտ ազգի կանանց։ Այսպէս ազգի ազգի խրատական բանիւք յորդորեալ քաջալերէր կազմ և պատրաստ պահել զզէնս մարտի։ Անուն քաջութեան նորա տարածեալ սփռեցաւ ընդ ամենայն երկիր և մինչև անգամ ի յարքունիս Պարսից հասեալ. անդ բողոք յականջս դատաւորին արկանէին. յիշելով զամենայն քաջութիւնս և զյաղթութիւնս. հատանելն

զդատավճիռ ինչ աւաղակաց և այլոց անձանց. և այլ բազում տեսակս քաջութեան և հանդամանաց պատերազմի պատրաստութեան զամենայն իրան ըստ կարգի պատմեցին. եթէ ինքնագլուխ և ըստ կամաց ինչ հաճոյից աներկիւղ Թուլագրեալ վարեցէ զիշխանութիւնս իւր. յընթացս երից ամաց բնաւին բարձր իշխանութեանս պարսից չկամի հնազանդել, նաև չկարէ ընդ նմա ոք մտանել ի մարտ։.։. Իբրև լուան նախարարք պարսից արքային նա ևս դատաւորն նըստեալ խորհուրդ արարին, թէ որպիսի՞ հնարիւք կարիցեն կորուսանել. վճիռ վերջնական խորհրդոյն այսպէս եղև. կամ բարուրանս ինչ դնիցեն ի վերայ նորա, կամ մահադեղով կորուսանիցեն զքաջն Եսայի։ Իբրև եկն ժամանակ ժողովելոյ զհարկս արքունական, եկին հարկահանք քանի ինչ նախարարօք և արքունի հրովարտակօք ի տուն քաջ նախարարին, Թերևս կարարել զխորհուրդս իւրեանց. մի ոմն ի պարսից կողմանէ կարի իմն բարեկամական ունէր սէր անքակտելի, ուստի երդմամբ ծանոյց զխորհուրդս նոցա, թէ արքդ չեն բարի, զգուշ լեր անձին քում յամենայն

կողմանց ի յուտելոյ յըմպելոյ և յայլ ինչ դիպուածոց։

ՔԱՋՈՒԹԻՒՆ ՆԱԽԱՐԱՐԻՆ ՄԵՐՈՅ ԵՄԱՅԵԱՅ։

Յորժամ հարկապահանջքն բռնադատեալ զհարկս արքունի, առեալ վերադարձան յերկիրն Պարսից, ըստ հաւանական պատմութեան, որ գրի ի հնգթերթեան տետրակի Դարսեղ անուն այր մի, որ նախ ուրացաւ զհաւատս Քրիստոսի, զկնի քանի մի ամաց զղջացեալ և եկն վերստին ի հաւատս իւր կորուսեալ. զի ոչ այսու ոճով, զոր ես գրեմ, այլ աշխարհաբառ լեզուաւ։ Ի կարգ անցցուք. Զկնի վերադառնալոյն հարկահանացն՝ և լսելոյն զչար խորհուրդս նոցա վասն թըշնամութեան անձին իւրոյ, որ կորուսանել ցանկանային, անյայտ պահելով զայս ամենայն խորհուրդս յարտաքնոց, կոչեալ առ ինքն ընդ իւրով իշխանութեամբ եղեալ մեծամեծ նախարարք և իշխանք և պայազատազարմք. իբրև ժողովեցան խորհուրդ արարեալ ընդ նոսա, թէ բա՛ւ է այսքան տանջանս ի ձեռս այլազգացն.

Քանզի նահանգն Դիլղակ սահմանակից գոլով պարսից, բազում վշտակրութեամբ անցուցանէին զկեանս իւրեանց։ Նախարարքն թէպէտ հայելով չարչարանացն տային յօժարութիւն տեսանել զհանգամանս, սակայն երկիւղ մեծ էր՝ յանկարծ ընդդիմանալ պարսից տէրութեանն։ Ի վախճան խորհրդածութեանս կամք եղեն ամենեցուն ջերմ սիրով վասն ազատութեան Հայրենեացն մեռանել, քան թէ տանել և յափշտակել զգեղեցիկ մանկունս և աղջկունս ի ձեռաց մերոց ակներև առաջի աչաց մերոց։ Վասնորոյ սկսան հաւաքել զերիտասարդս և զայլ մանկունս պատերազմողս և քաջասիրտս, որչափ ձեռընհաս եղեն յոլովագունից, զի յայնժամ Հայք բազումք էին. լի էր գաւառն. և ամենեքեանք կրթեալք և վարժեալք ի մարտի. Հայք կարի քաջք էին. Նաև՝ Զօրապետն Եսայի հմուտ ամենայն հնարից մարտի— զի խրախոյս տայր և քաջալերէր, ուսուցանէր զամենայն հնարամարտութիւնս. աներկչոտ խրոխտաբար արձակել ի վերայ մահաղէն թշնամեաց՝ աներկիւղ իսկ նահատակիլն՝ քան վատ անուն ժառանգելով կեալն։ Նաև մնալ միշտ պատրաստ

ի լսել զձայն պատերազմի՝ կամ հրամանի ի նոյն վայր գումարել՝ յորում խաղայք։ Ի գալ երկրորդ ամի եկին հարկահանքն բազմութեամբ յոյժ հազար արամբ սպառազինեալ, քան զառաջինն կրկնապատկեալ զհարկս արքունի. զի և բաց յաւելորդութեամբ պահանջելոյն իբրև գազանք կատաղեալք և արեան ծարաւիք. նկատելով ներքին տեսարանօքն քաջ նախարարքն մեր, ետես, զի չեն ըստ վաղեմի իւրեանց սովորութեան, այլ՝ այլաեսակ մտադրութեամբ են եկեալ. վասնորոյ դէմ յանդիման կանգնեալ, ընդդիմացաւ նոցա. ասելով, մի՛թէ արծաթագին և ստրուկ ծառայք եմ անկրօն պարսից ազգին, չունիմք յետ այսորիկ դրամ մի պարտական պարսից տէրութեան. Եւ դուք ըստ հրամանի արքունին՝ զոր ինչ կամիք՝ արարէ՛ք. ասաց և ել արտաքս բարձրագոչ ձայնիւ կոչեաց. ելին ի բնակչաց իւրեանց ի նմին վայրկեանի արք կորովիք և քաջամարտք իւրաքանչիւր սուր ի ձեռին և հրացան. որք գումարեցան անդ էին երկու հազարք հինգհարիւր միայնակ ի բերդաքաղաքէն Դողոյ. իբրև տեսին պարսիկք, սրտաբեկ եղեն ամենեքեան և

գունատեալք ի յառաջագոյ գործոյն մնացին թուլացեալք. զի ամենայն զինուորք պարսից և նախարարք քաջ գիտէին զվարս մերոյս Զօրապետին։ Ցեայ եկն՝ եկաց առաջի նոցա բանիւ դատափէտ առնել զնոսա. ելէ՛ք՝ ասէր աստէն և գնացէ՛ք, եթէ այսուհետև կամիցէք խօսել զբան մի բարի կամ չար, գէշ ձեր արկանեմ գաղանաց և շանց. չկարաց ոք շարժել ի նոցանէ զլեզու իւր խօսել զչար կամ բարի. զի նոքա քա՛ջ գիտէին, թէ մերձ էր զսուրն շաղախել արեամբ իւրեանց. և չէր միջոցական ինչ ժամանակ, զի հասեալ էր ժամ յագեցուցանելոյ զսուրն արեամբ պարսից։ Զայս ամենայն տեսեալ նաև իսկութեամբ գիտէին. յառաջագոյն, վասնորոյ քաղցրութեամբ առեալ զարձակումն վերադարձան յերկիրն իւրեանց. հասեալ անդ պատմեցին զամենայն եղեալ իրսն մանրամասն թագաւորին իւրեանց. իբրև լուաւ Շահն, զի յո՛յժ տրամեալ խռովեցաւ ի վերայ քաջին Խասյեայ. բարկացաւ անհամբեր հոգւով, եռացեալ և փրփրեալ մաղձն զառնութեան թափեալ յերկիրս մեր. ասէր՝ գնացեալ ջնջեցից զամենայն կենդանիս՝ ի մար-

դոյ մինչև յորում լցէ շունչ կենդանի։ Իբրև բացաւ դուռն գարնանաբեր, յամենայն կողմանց հողմ հանդարտ հնչակ տարածեցաւ յերկիրս մեր, զի արարածք ամենայն ոգևորեալ կենդանասցին․ բայց մեզ հողմ մահաբեր և դառնաթոր եկն և հնչեաց։ Վասն զի յաւուրս համբարձման Քրիստոսի եկն բանակն զօրացն պարսից յեզր Երասխ գետոյն․ և անտի յառաջոյն առաքեալ զբանի մի հեծելազօր զինուորս քաջամարտիկ, զի զորս տեսցեն անխնայ հարկանել և գերել․ բայց առ այս արարեալ կարծիս՝ իբրև եկեալ տարածեցան, չկարացին վնաս ինչ բազում առնել․ բայց շրջեալ յուղէին ընդ ամենայն տեղիս, Թերևս կարիցեն գիտել զտեղի ամրացելոցն․ զի Հայք յառաջագոյն ամրացեալք էին յանառիկ բերդին լեռան Դողայ․ զի գաւառն համայն գտանիւր ի բերդին․ Նաև անտեղեակ էին պարսիկք տակաւին թէ ո՞ւր իցեն ժողովեալ այնքան Հայք․ մի ոմն յազգէն անօրինաց նահանգին Դիզակայ գնացեալ առ սպարապետն պարսից՝ խոստացեալ ցուցանել զտեղին, զելս՝ և զամենայն անցս ամրացելոցն․ Թէպէտ ցուցանէր զամենայն

զելս՝ բայց կասկածանօք․ այն էր երկիւղն, զի ականատես էր զօրացն Հայոց և գիտէր զքաջութիւնս նաև զօրապետին Հայոց․ վասնորոյ յայտնեալ նոցա թէ ունի ընտրեալ և գումարեալ առ ինքն զբազմութիւն քաջամարտ զօրացն և աներկիւղ ճակատամարտ արանց, զի վառեալ, կազմ և պատրաստ են ի վերայ օրինաց և ազգին իւրեանց՝ երդմամբ հաստատեալ են ի յինքեանս զդաշնադրութիւն և ապա՝ մտեալ ի յամուրն, զամենայն զոր ինչ առնիցէք՝ զգուշութեամբ արարէք․ վասն զի տեղի ամրացելոցն անմատչելի իմն է։ Ի բանիս այսմիկ երկիւղ մեծ անկաւ ի վերայ նոցա․ բայց նախ քան զամենայն ընտրեալ քանի մի մեծամեծ նախարարս գնալ ընդ առն ցուցանողի տեսանել զդիւրութիւնս և զդժուարութիւնս ճանապարհին․ զառ ի վեր գնացեալ ընդ ամենայն տեղիս շրջեալ տեսին զամրութիւն․ կարի իմն դժուարամատչելի է տեղին․ վերադարձան ի բանակն և պատմեցին սպարապետին՝ թէ անմատչելի է․ բարկացեալ զօրագլուխն կամէր սրախողխող առնել զպատգամաբեր նախարարսն․ թէ դուք արդարև թշնամի էք թագաւո-

բին մերոյ․ ընտրեաց զայլ զօրավարս և եա զմեծ մասն զօրացն ի ձեռս նոցա․ պատուիրեաց նոցա աներկիւղ յառաջ մատչել․ Թէև զկէս մասն ի ձէնջ կոտորեսցին, մնացեալքն ի յերկիւղէն մի՛ որոտաբեկ եղեալ յետս դառնայցեն․ նոքա ևս ընաջինջ եղեալ սպառեսցին․ այլ սուր ի ձեռին և մահ առաջին զմիմեանս խրախուսելով յառա՛ջ մատէք՝ զի Հայք են ամենեքեան երկչոտք․ եթէ տեսանեն ի կողմանէ իւրեանց զբանի մի անկեալս և զվիրաւորս, նոյն լինին փախստական, կամ յանձնատու։ Զկնի պատուիրանացս զօրքն քաջալերեալ՝ սկսան ինքեանք ի վեր խաղալ յարևելեան կողմանէ լերինն․ իբրև մարախ՝ սփռեալ տարածեցան յարևելեան կողմանս և ծածկեցին ի բազմութենէն զերեսս կողմանն—զեռացեալ սլանային դառ ի վեր․ զի յայնժամ չէր ընաւին բոյս կամ անտառ․ այլ ողորկ խոտաւէտ և ծաղկանկար, բայց Հայք ի նմին ժամու մտեալ էին ի դաշտն, վասն զի արևելեան կողմամբ փորեալ էին ի ծայրէ ի ծայր խորագոյն քան զվեշտասան կանգուն և լայնութիւն տասն․ մտեալ էին ի թիկունս փորեալ հողոյն և քարանց։ Իբրև տեսին

զի պարսիկք տարածեալ ուղխօրէն առանց ակնածութեան և աներկիւղ արշաւանս առեալ ի վեր սլանան և ահա մերձ են հասանել ի գունդս Հայազուն զօրացս։ Ել քա՛ջն Եսայի՝ նախարարն մեր ի գագաթ միոյ վիմի, որպէս առիւծ հրաշունչ ահեղագոչ ձայնիւ աղաղակեաց առ զօրս իւր․ Թէ ո՛վ քա՛ջք որդիք իմ, ահա օր փրկութեան և ժամ նահատակութեան, ելէ՛ք ահա՝ փակեցաք ընդ ձեռամբ պարսից․ իբրև լուան գունդն Հայոց զաղակալի հրաման նախարարին մերոյ, անյապաղ և աներկիւղ արձակեցան ի վերայ նոցա արագութեամբ անդառնալի․ զկնի արձակման հրացանացն իւրաքանչիւր ոք սուր ի ձեռին մերկացուցեալ, և զանձինս ի կշխամահու եղեալ․ և կափուցին զաչս իւրեանց խառնեցան ընդ միմեանս՝ ձայն առեալ յերկոցունց կողմանցն՝ աղաղակք մարտին զվայրն դողացուցանէր․ զէք անկելոցն և գլուխք սպանելոցն գլորեալ թաւալմամբ զառիվայր հոլովէին իբրև հեղեղք յորդ անձրևոյ․ յերկոցունց կողմանց ջերմաջերմ արիւնք զիականցն անկելոց հոսեալ զծաղկանկար երեսս լերինն տարաբաղդ ոռոգէին․ վա՜յոց և աղխողոմ

հառաչանաց՝ կնամահ վիրաւորելոց և որբևնահոս ցամաքելոյն հառաչանաց ձայնք խառնեալ ընդ նրայս լսելիս կենդանեացն մնացելոց վիրաւորէին։ Ի սակաւ հարկին երկարաձիգ մարտին յեր-կոցունց կողմանց բառ լքելոյն զօրաց տարժանելի պատերազմին յետս դառ-նայլն և անկելոցն զթիւ շնչարգելու-թեամբ թուէլին, և զկնի թուելոյն ան-կելոյն հաշիւ զօրացն պարսից տասնա-պատիկ աւելանայր քան զՀայոցն։ ան-կեալքն ի յազգէն պարսից առաւել քան զհազար և վեց հարիւր։ ի հայոց հարիւր և տասն, ամենեքեան արք կորովիք և սիւնք ազգի հանգոյն մեծի քաջին Եսայեայ։ սակայն չկարէր հանդարտիլ Զօրապետն մեր։ անմխիթարական հոգւով անկեալ ի վերայ գիականց անկելոցն, լայր դառնա-պէս՝ որպէս բեկեալ անկաւ առ թևն յարմատոցն։ Մերձեալ տեսանելով պար-սիկք զյոլովագոյն հարուածս գնդին իւր-եանց, վերստին սպառազինեալ և գունդ կազմեալ խոստանալով զմիմեանս և պըն-դելով զգաշն ուխտին՝ միանգամայն յայտ նուազի կամ պարտեմք ընաջինջ կորնչիլ, կամ անուն յաղթութեան ժառանգել։

անմիջաբար յետին բանն ի բերան տակա-ւին դառն վեր աճապարեալ գնացին։ Հայք տեսին թէ այժմ կատաղեալ և բար-կութեամբ դան փախուցեալ ի դարանէ փութով մտին ի բերդն։ ի թիկանցն ան-մատչելի էր։ յառաջոյ կողմանէ եկեալ հասին։ սկսաւ սաստկանալ պատերազմն յարտաքուստ և ներքուստ։ խառնեցան ընդ միմեանս ձայնք և ծուխք հրացանաց մարանչելոյն։ հարան իսկ կէս մասն զօ-րաց պարսից ի մեծամեծ թաւալեալ վի-մացն անդր կիւտակելոց՝ յայժմ պատե-րազմի հարուածք բաղումք եղեն զօրացն այլազգաց։ Տեսեալ թէ ո՛չ ինչ վճարի, բայց ի մեծամեծ վնասուց, յետ դարձան կորագլուխ մնացեալքն։ և եկեալ ի բա-նակն, որքան վերադարձ քննութիւն արա-րին ի վախճանս ո՛չինչ եղև վճար՝ չուեալ գնացին յերկիրն իւրեանց։

Թէ ՈՐՈ՞Վ ՄԱՀՈՒԱՄԲ ՄԵՌԱՒ ՔԱ՛Ջ ՆԱ-ԽԱՐԱՐՆ ՄԵՐ ԵՍԱՅԻ

Պատմեն իրաւաբանութեամբ, թէ իբրև հասին Զօրապետքն պարսից ի Տավ-րէժ քաղաք և անդ պատմեցին զամենայն

դիպուածս իւրեանց նահին և զամրութիւն տեղւոյն, թէ անմատչելի իմն է. և զպատերազմ Հայոց։ Իբրև լուաւ Թագաւորն պարսից զամենայն եղելոյն, բըրդեալ բարկութեամբ. ի թուականին Հայոց ռմ էր Թագաւորն պարսից Նադիր քան զառաջինն բազմացուցանելով բազմացոյց զզօրս և յայլ զանազան ազգաց զումարեաց. զզօրապետսն փոխեաց՝ մեծ ազնուագին պարգևս ընծայեաց. յիմարեցոյց զամենեսեան ոսկով և արծաթով և մեծամեծ պարգևօք, պատրաստեալ զամենայն հանգամանս մարտի և յանկարծօրէն չուեալ եկն բանակն զօրաց յայսկոյս Երասխ գետոյն. իբրև տեսին Հայք, շփոթեցան և ընդ իրարս անկան. անմիջապէս միայն փոյթ կալան յանձինս իւրեանց զմանկունս և զկանայս հասուցանել ի բերդն Դողայ. իբրև բերեալ խաղացուցին ի գագաթ լերինն, կալան զամենայն անցս զօրք Հայոց. բայց նոքա տակաւին արձակեալ սփռեցան ի յաւար և ի գերեվարութիւն. բայց ոսկաւ եղև մնաս գաւառին. զի ամենեքեան փութով հասուցին զամենայն կարևոր պէտս ի յամուր տեղիս. յետ ամենայնի եկեալ զօ-

րապետն պարսից նշմարէր ամրութիւն տեղւոյն բերդին Դողայ, որ ի բարձրագագաթ լերինն կայ պարսպապատ շինեալ անառիկ, վասն որոյ յանդիմանեաց զառաջի զօրապետին անասնական յիմարութիւնն. թէ ընդէ՞ր կորուսեալ է տգիտութեամբ և ունայնութեամբ զայնքան զօրսն. անհնարին է մարդոյ ներհակութեամբ կամ մարտիւ մերձենալ, մեզ չէր հնար յաղթել պատերազմաւ, եթէ ոչ սիրով և հաշտութեամբ։ Վասն որոյ զքանի մի անձինս թունաւորեալ ստապատիր բանիւք զախոնդս և զօրէնսդէտս Ղորանն տուեալ ի ձեռս դիմեալ գնացին ի բերդն. սկսան խօսիլ, թէ թագաւորն լուեալ զանյաղթ քաջութիւն ձեր, բայց պարգևատուութենէ չունի և չկամի վրէժխնդրութիւն. միայն ունիմք անցանել յայնկոյս Կուր գետոյն յերկիրն գուգուրացւոց, զի նոքա ես չկամին մնալ ընդ իշխանութեամբ մերով. այսպէս ասէր և երդմամբ հաստատէր և զզորանն ցուցանէր. բազում պատ ի պատ բանիւք կամէր պատրել. բայց գիտէր նախարարն մեր նենգամիտ բանս նոցա. ասաց օրս չէ հաշտութեան և խաղաղութեան. այլ

և իսկ քաջութեան և յաղթութեան, ա-
րեան և մարտի. իբրև տեսին պատգամա-
ւորքն՝ եթէ գիտէ զնենգութիւնս իւր-
եանց, վերադարձան ի բանակն. և պատ-
մեցին Զօրապետին, թէ չունի նշան հաշ-
տութեան. ի բանիս յայսմիկ տակաւին
խօսէին. իշխան ոմն անանուն ի Հաբանդ
գաւառէ եկն և խոստացաւ տալ զնա-
խարարն մեր ի ձեռս նորա. որ և ինքն
է վաղուց յանձնատու եղեալ ծառայէր
պարսից գաւառաւն: Ըստ Վասակայ սա-
տանայական արարմանցն սա ևս առ-
եալ զսուրբ աւետարանն և զխաչն և զմի
սուտ քահանայ զիմեալ գնաց ի բերդն
և ինքն մերձաւոր բարեկամ նախարարին
մերոյ. անդ երդմամբ հաստատեաց զսուտ
բանս պարսից. և նա հաւատաց սրբոյ
աւետարանին: Եւ եկեալ քանի մի մե-
ծամեծ իշխանօք և գնացին ի բանակն
պարսից. և մինն ի վրան զօրապետին
գլուխ խոնարհեցուցեալ ամենեքեան. և
մնացին սպասեալ հարցման: Զօրապետն
պարսից նշմարէր մտօք և աչօք պար-
թևական հասակն և գեղեցկակազմու-
թիւնն. և անհակնակերպ զիմացն զի և
իսկ հիացեալ էր՝ ի տեսարանացն. եթէ

չլինէր կասկած ի թագաւորէն և չարա-
խօսութիւն ընկերացն, նորա կամացն
անհաճելի իմն էր առնել զվնաս կամ
լինել պատճառ մահուան նորա. ուստի
զկնի բազում ինչ հարցաքննութեանցն
ակնարկեալ շրջապատ զօրացն կալեալ
զնա և կապեցին երկաթի շղթայիւք և
վարեցին յայլ վրան. և պահեալ անդ
զերիս տիւ՝ և զերիս գիշեր և ապա
շնչասպառ արարեալ: Աւեն ցապանելն
երիցս անգամ առաքեալ միջնորդ և բա-
րեխօս վասն արձակման առ մատնիչ իշ-
խանն Հայոց. թէ քեզ դիւրին է աստէն
զիս ազատելն. նա յերկիւղէն չկամեցեալ
լսել զբանս նորա: Զկնի արձակման, ասէր,
գիտեմ իսկ և իսկ չթողու բնաւին զիս
կենդանի, վասնորոյ չկամեցաւ: Սակայն
իշխանացն, որք ընդ նմա գնացեալ վնաս
ինչ ո՛չ արարին, միայն պատուիրեալ
միջնորդութեամբ իւրեանց յանձնատու
լինել այնուհետև՝ և եկեալ բերդաբա-
նակք զօրքն գնասցեն ի բնակութիւնս
իւրեանց՝ և պարապեսցեն ի գործս ինչ.
անցեալ գնացին ի բերդն իշխանքն. և
պատմեցին անդ զմահն և զամենայն եղ-
եալ իրսն. և զպատգամս յանձնատուու-

թեան. բայց խոր խոցեաց զսիրտս ամենեցուն մահ նախարարին մերոյ. ամենայնքն ողբ ի բերան առեալ և զարտասուս յաչս անմխիթար լային: Նաև չընկալան ի յարգանս զբանս պարսից զօրապետին, զի և իսկապէս ըստ գործոյն գիտացեալ, եթէ ունին առնուլ զվրէժխնդրութիւն, գերել զմանկունս և զաղջկունս՝ և զկանայս և զայլսն բնաջինջ առնել. վասն որոյ չկամեցան տակաւին հաշտութիւն և խաղաղութիւն առնել. Նաև քանիցս անգամ առաքեցին պատգամաւորս պարսիկք. չկամեցան ընդունել Հայք զբան նոցա. վասն որոյ չուեալ գնացին յերկիրն իւրեանց:.

Թէ ո՞վ յաջորդեաց զկնի մահուան նորա՝ ցուցանէ մեզ տապանագիրն անթիւ:։.:—

Յայսմ տապանի հանգչի մարմին
քա՛ջ եւ արի՛ մելիք Բաղխտամին.
սա էր որդի մելիք Արամին.
մահ եւ վախճան պատմեն սորին
մահադեղով Իպրահիմ խանին.
եւ որք հանդիպիք ի տապան սորին,
միով բանիւ ողորմի ասէք, ամէն:.

Թէպէտ բարեպաշտն մելիք Բախտամ առնէր իշխանութիւն, սակայն ընդ բռնակալութեամբ Պարսից նուաճեալ կայր երկիրս մեր և իշխանութիւն նորա: Քանզի զկնի սպանելոյ նախարարին մերոյ քաջին Եսայեայ գրաւեալ կայր ընդ թագաւորութեամբ նոցա. բնական թշնամիքն ազգիս մերոյ պարսիկք տակաւին ևս ոխս պահէին ըստ առաջնոյ մարտին. ուստի բազում վշտակրութիւնս անցուցեալ յերկիրս մեր չարչարէին: Դարձեալ՝ բռնութեամբ քարշեալ զգեղեցկագոյն մանկունս և աղջկունս առաքէին ի Տավրէժ քաղաք ընծայ թագաւորին և մեծամեծ նախարարացն մտեալ ի տունէ ի տուն յուզէին ի թագստէն և ի գրկաց մարց յափշտակեալ տանէին՝ նաև ի յանդոց և յանդաստանաց յայգեաց և ուր ուրեք գտանէին, տարեալ ի յերկիրն պարսից վաճառէին դիւրագին արծաթոյ. նոքա ի հաւատոց ուրացուցանէին. և ըստ օրէնի մահմեդականաց թլփատէին և բազում խայտառակութիւնս գործէին ընդ մանկանցն ոխակալութեամբ. այս ինչ չար սովորութիւն մարդելուզութեան բազմացաւ յերկրի մերում. տարան զան-

թիւ մանկունս Հայոց և մնաց անդ այլասեռեց. և բազում ծնողք անզաւակացան յորդւոց իւրեանց. ի յապաղելն յանդի ի գործս ինչ, չէր յոյս ծնողաց ընաւին տեսանել զերեսս որդւոց իւրեանց: Ի սոյն իսկ ժամանակի ել Իպրահիմ խանն յերկրէ մերում Աղուանից, քան զամենայն չարագոյն. օր ըստ օրէ գնայր և զօրանայր մինչև անդամ բըռնացեալ նուաճեաց ընդ իշխանութեամբ իւրով զերկիրս Արցախեան. ի մեծամեծ նախարարաց Հայոց և յայլազգաց չկարաց ոք ընդդիմակաց լինիլ նմա. և գալ յառաջ՝ դիմաքանել առաջի բուռըն զօրութեան նորա. թէպէտ բըռնացեալ տիրապետէր Արցախեանս երկրի և նուաճեալ զամենեսեան ընդ իւրով իշխանութեամբ, բայց ունէր տակաւին կարօտութիւն ոսկւոյ և արծաթոյ, հարըստութեան. վասնորոյ չկարէր ըստ անուան իւրոյ մեծութեան վարել զիշխանութիւն իւր: Ուստի սկսաւ նեղել և չարչարել զմեծատունսն երկրիս Աղուանից՝ կողոպտել զամենայն արծաթ և ոսկի և զայլ ագնիւ իրս գտեալս ի տան ունեորաց: Նաև իսկ զբազում քրիստոնեայս ի

հաւատոյ մերոյ ուրացուցանել և դարձուցանել ի դենս մահմեդական, որպէս երևի իսկ յամենայն ընակութիւնս Արցախ երկրի: Դարձեալ Իպրահիմ բռնաւորն՝ իբրև ետես, եթէ յամենայն կողմանց խաղաղացեալ է և մեծացեալ ամենայն ինչիւք, մանաւանդ հարստութեամբ: Սկսեալ զատասելի չարութիւնս հասոյց ազգիս Հայոց. ընտրեալ գեղեցկագոյն աղջկունս և մանկունս և բռնութեամբ քարշեալ տանէր՝ նախ ուրացուցանէր՝ և ապա զանպատմելի խայտառակութիւն գնէր ի վերայ նոցա. զոմանս բաշխէր իւրոյ գործակատար մեծամեծ անձանց և զոմանս առաքէր թագաւորին պարսից իբրև ընծայս. դնէր զանազան փաթթար անունս ի վերայ ողորմելի ազգիս մերոյ. եղեն որպէս զոչխար ցրուեալ առանց հովիւ և թողեալ անխնամ և անտերունջ ի պահպանութենէ. ուր ուրէք պատահեալ տեսանէին աւազակք և ես գազանք անօրէնք գողացեալ և յափշտակեալ տանէին. և զոմանս պատառէին զոմանս վաճառէին: Արդարև մնաց խղճալի ազգս մեր ձանձրացեալ ի մեծի տանջանս չարչարանաց. մինչև անդամ անհնարէն էր

5

երիտասարդաց և նորահաս մանկանց և
զուարճադեղ պատանեաց ըստ ջերմագոյն
ցանկութեան սիրոյ որտից իւրեանց զգե-
նուլ հանդերձս զարդարուն՝ կամ կրել
զզէնս. նոյնպէս նորապսակ հարսունք
և զարդասէր օրիորդք ամենեքեան զըր-
կեալք և մերկացեալք ի յարմարական ինչ
և գեղապաճոյճ հանդերձից: Հայք իբրև
տեսին զանտանելի չարագործութիւնս
նորա և անզերծանելի տանջանս, թէ
չի՛ք հնար ազատութեան իւրեանց, մնա-
ցին ի մեծի տրտմութեան տարակուսա-
նաց. թէ արդեօք ուստի՞ իցէ մեզ փըր-
կութիւն: Իբրև անճարացեալ եղեն յա-
մենայն կողմանց, սկսան ընդ մեծամեծս
բեկաւղնէից և իշխանաց խորհուրդ տե-
սանել. թերևս ելս հնարից ազատութեան
գտանել. յայսմ քննութեան եղև յա-
ռաջընթաց ազգասէր նախարարն մեր՝
Մելիք Բախտամն. թէ ո՞ն, արի՛ք երթմամբ
հաստատեսցուք զթուղթ աղերսանաց և
առաքեսցուք ի ձեռն հաւատարիմ դես-
պանաց առ կայսրն Ռուսաց. թ'երևս
եկեալ ազատեսցէ զազգս մեր յանտանելի
չարչարանացս աստի: Ըստ արարեալ խոր-
հըրդոցն գրեցին զթուղթ պաղատանաց՝

և կնքեալ իսկութեամբ հաստատեցին,
թէ եկեալ ազատեսցես զմեզ ի գելարա-
նաց անզերծ տանջանացս ազգին պար-
սից. և զայլատեսակ ծանր՝ ծանր բանս
դրեալ կնքեցին. և ապա՝ յուզէին և
խնդրէին առ ի գտանել զարս խորհրդա-
պահս և ազգասէրս մինչդեռ ի նոյն կա-
պակցութեան խորհէին, այր ոմն Հայա-
զուն չարախոհ գաղտ գնացեալ առ բռ-
նաւորն և ծանոյց նմա զծածուկ գործս
Հայոց իշխանացն և Բեկաւղնէիցն. Թէ
Հայք համայն և գլխաւորք հանդերձ,
ժողովեալ յեկեղեցին իւրեանց և հաս-
տատեալ զթուղթ աղերսանաց առաքել
առ կայսրն Ռուսաց, զի եկեալ բարձցեն
զիշխանութիւն ձեր և զթագաւորութիւն
Պարսից ի միջոյ: Իբրև լուաւ բռնաւորն
ընդոստուցեալ և սաստիկ բարկութեամբ
վառեալ, մինչև անգամ երկիցս և երիցս
վերադարձ իմն քննութեամբ տեղեկա-
ցեալ ստուգութեամբ իրացն եղելոց. իբ-
րև ետես՝ եթէ ճշմարիտ է կապակցու-
թիւն Հայոց, ի նմին աւուր պատրաս-
տեալ զհեծեալս բազումս հրամանատար.
պատուիրելով նոցա սաստկագոյն ի լնել
զձայն հրամանի իշխանութեան իւրոյ ան-

յապաղ գալ և գումարել յատեան դա-
տաւորութեան իւրոյ. ամենայն իշխանք
պետք և գլխաւորք՝ և բեկաղնեայք ըստ
հրամանի բռնաւորին՝ և ըստ ժամադրու-
թեան գնացեալ ազդարարին. և նոքա
անմիջապէս եկեալ գումարեցան ի թա-
րոն նորա ի Բերդաքաղաքն Շուշի: Իբրև
նստաւ յատեան դատաւորութեան, կո-
չեաց զամենեսեան առ ինքն՝ այլագունեալ
բարկութեամբ, սկսաւ ընդ սաստկագոյն
քննութեամբ արկանել զնոսա ահացու-
ցական բանիւք, թերևս կարիցէ գտանել
զյորդորող խորհրդագրութեանն. զի երդ-
մամբ ուխտեալ էին բնաւին չյայտնել.
Իբրև ետես Իպրահիմ խանն, թէ չկամին
յայտնել, և չկարէ դաշանօք հաստատել
ի վերայ նոցա կամ միոյ ուրուք, հրա-
մայեաց զամենեսեան պնդել ի յերկաթի
կապանս և դնել ի ներքին խաւարային
բանտի. տալ այնքան չոբացեալ հաց և
ջուր սակաւ մինչև պահել հազիւ զկեն-
դանութիւնս իւրեանց: Նաև պատուիր-
եալ վերատին, ասելով թէ՝ բնաւին չու-
նիք ելանել յայդ ինչ խաւարային տեղ-
ւոյ՝ մինչև ծանուցանելն ինձ զնախկին
յորդորողն դաշնագրութեան ձերոյ: Իբրև

տեսին՝ չէ՛ք հնար յումեքէ արձակման,
կամ ազատութեան, նաև՝ յամենայն
կողմանց պատեալ պաշարեալ նեղու-
թիւնքն, զի իւրաքանչիւրոցն բնակութիւն
և գիւղ կամ—գաւառ թողեալ անխնամ
և անտերունջ. զի արք անօրէնք և մահ-
մետականք առնէին ողորմելի ազգիս մե-
րոյ զբաղում վնաս՝ գերեալ զանթիւ
մանկունս և տարեալ վաճառէին ի տէ-
րութեան պարսից. և այլ զանազան
վնասս գործէին. զայս ամենայն լուեալ
բանտարկեալ նախարարքն մեր, բարւոք
համարեցան յայտնել, զի մի՛ վասն միոյ
անձին կեցութեան զբոլոր գաւառս մեր
խանգարեսցեն անօրէնքն. վասնորոյ ան-
ճարացեալ յայտնեցին բռնաւորին. թէ
հիմնարկու բանիս՝ առաջինն նա ինքն
Մելիք Բախտամ եղև: Իբրև լուաւ՝ հրա-
մայեաց արձակել զամենեսեան՝ զկալա-
նաւորսն. միայն թողին ողորմելի նախա-
րարն մեր ի բանտի. զկնի բանի ինչ ա-
ւուրց հանեալ ի բանտէն և պնտեցին
ի շղթայս երկաթի և առաքեաց ի ներ-
քին կողմն Պարսից տէրութեան ի յԱր-
տաւուլ քաղաք. պատուիրելով արանցն
տանողաց՝ բաց ի թղթագրութենէն՝ ար-

կանել ի խորին բանտարգելանոց. մնալ ընաւին կարօտ լուսոյ արեգական: Արարին ըստ հրամանի նորա, և կատարեցին զամենայն պատուիրեալսն. տարան՝ արկին զողորմելին անդ ի բանտ ինչ խաւարչտին, մնաց անդ եօթն ամ արգելեալ ի մթին տեղւոջ՝ կարօտ իսկ չոր հացի և ըմպելոյ ջրոյ՝ միայն տալ այնքան՝ պահել զկենդանութիւն: Զկնի ամենայնի ամենակալն Աստուած այց արար կորուսելոյն:. Քանզի սովորութիւն է ի վաղուց անտի թագաւորաց պարսից՝ նախ գնալ յԱրտաւուլ քաղաք ի տապան սուտ մարգարէին իւրեանց՝ Ալի կոչեցելոյն:, առնուլ զսուր նորա և կապել ընդ մէջ իւր. և ապա նստել յաթոռ թագաւորութեան իւրոյ. վասնորոյ զի սուր նորա կախեալ կայ ի վերուստ կողմանէ տապանի սուտ մարգարէին նոցա. կապելն զսուր նորա ցուցանէ, թէ ի պատահելն թշնամեաց պատերազմի անխափան ունին զօրութեամբ նորա և անուամբ յաղթել նոցա. ըստ նոցա տխար կարծեաց՝ այնպէս են սահմանեալ իւրեանց նախնիքն. նաև՝ ունին սովորութիւն անդ առնել զողորմութիւն կամ ազատել զգերիս՝ զբան-

տարկեալս: Զկնի մահուան Նադիր Շահին, երբև եկն յաջորդ նորա առնել զիւրեանց նախնեաց սովորութիւն, զի բանդապեան ունէր գութ ի վերայ ողորմելի բանտարկեալ նախարարին. վասնորոյ ըստ աղերսանաց նորա գնաց բանդապետն թախանձանօք և պաղատանօք զարձակումն խնդրեաց ի թագաւորէն պարսից նախարարին մերոյ՝ ըստ յառաջագիր եղանակին տանջանացն: Հրամայեաց արձակել ի նմին ժամու զնա և բերել առ ինքն. արարին ըստ հրամանի արքունին. երբև բերին առ նա, բաղում մխիթարական բանիւք մխիթարեաց զբեկեալ սիրտ բանտարկելոյն՝ և պարգևեաց մերկութեան մարմնոյ նորա զնորայգոյն՝ թանկագին հանդերձս, վասն զի ազգարանութեամբն ճանաչէր՝ որ յազգէն մեծի մելիք Եկանայ սերեալ էր: Նաև Շահն սիրահօրդոր բանիւք և ողոքական շողոքորթէր ասելով՝ եթէ դարձցիս ի Հայոց դաւանութենէ և ծառայեսցես մահմետական դենից, տեսցես զմեծամեծ բարութիւնս՝ և ես կարգեմ ի վերայ պարսից երկրի մեծ իշխան և դատաւոր: Նա հրաժարիւր յայնպիսի անպատեհ արարմանցն,

տեսեալ թէ ի յետին ծերութեանս ժամանակի՝ ոչ է բաւուք և չէ յարմար ինձ առնել դայդ գործ: Միայն եթէ գտից զշնորհս առաջի քո, տալ ինձ հրովարտակ Ձեռով արքունի հրամանաւ՝ առանց նեղսակութեան գնալ՝ ի մայր Աթոռն Սրբոյ Էջմիածնի: Ըստ խնդրանացն ետ զանցագիրն ի ծոց իւր և զիմեալ գնաց ի Սուրբ Աթոռն Էջմիածնի. և անդ կատարեալ զփափագութիւն սրտի իւրոյ և ընկալաւ զկատարեալ ապաշխարութիւն յընթացս եօթն ամի լուծմանց պահոցն և անգիտական գործեալ մեղացն. և ապա անդանօր մնացեալ սուղ ինչ ժամանակ և ընկալաւ զվերջնական օրհնութիւնն և զհրաժարական և վերադարձաւ՝ գալ ի տեսութիւն ընտանեաց և կարօտելոց. ի բազում ժամանակաց անտի փափագեալ կային ուստերք և դստերք նորա. և կինն. եկեալ արժանացաւ բոլորիցն տեսութեան: Բայց իբրև լուաւ բռնաւորն երկրիս Իպրահիմ խանն, չկարաց յայտնապէս մնաս ինչ առնել. խորհուրդ արարեալ ընդ նախարարաց իւրոց, բառնալ ի միջոյ մահադեղով: Վասնորոյ սիրով կոչեալ առ ինքն և խոստացաւ տնել

վերստին իշխան ի վերայ Հայրենեացն. ետ պարգևս և սիրայորդոր բանիւք խրախուսեալ զնա, յերեկոյին հրաւիրեալ ի ճաշ. ըստ յառաջագոյն պատուիրանացն ծառայքն ետուն զհամադեղ և այնու կընքեաց զկանկալի կեանս իւր ի Տէր:.:.:..

Թէ ով յաջորդեալ զկնի մահուան սորին, կամ ընդէ՞ր է առանց արձանագրի:. :. :. :. :. :.

Զկնի մահուան Նախարարին մերոյ՝ ըստ խնդրանաց հասարակութեան Գաւառային անձանց մեծաց և փոքունց եղ իշխան և դատաւոր ի վերայ նահանգին Դիզակու՝ որդի նորա զՔաջն Ապաս Իպրահիմ բռնակալն. որ և իսկ յաղգս և ի սերունդս նոցա ընաւ տակաւին չէր ծնեալ արդարև այնու պարգևական հսկայաձօր կերպարանաւ ահագնակերպ. Թէպէտ ընդ իշխանութեամբ բռնաւորին առնէր դատաստանս. սակայն քան զնա իրօք բարձրագոյն դատողութեամբ վարէր զիշխանութիւն իւր՝ հանդոյն իսկ քաջին Նեեմեայ: Զկնի աւուրց ինչ անցելոց

և ըներմանցն միջոցական յաջողութեան սկսաւ գամ քան զգամ նուաճել զբոլոր Հայրենիսն. նաև իսկ զազգն մահմետականաց: Վասնորոյ տարածեալ սփռեցաւ անուն քաջութեան նորա և անաչառ արարեալ դատաստանացն, զգաստութիւն մեղաւորաց. և վնասակար անձանց ամենևին իսկ առանց արծաթսիրութեան և կաշառաց առնէր, զմահապարտն զամենայն պատժէր առանց աղատութեան. կախէր զոմանս ի վերայ մեծի ճանապարհի զկախաղանէ. զոմանս հրամայէր ծառայից սրախողխող առնել առաջի ուղակաց և հասարակութեան, զի մի ոք այնուհետև վստահասցի զնոյն գործել չարութիւն: Արդարև սարսեալ դողայր գաւառն առաջի նորա: Զի անուն քաջութեան նորա վա՛ղ ուրեմն իսկ հասանէր յականջս Մեծի Բռնաւորին. նա յոյժ ցնծայր և ուրախանայր քաջութեամբ նորա և անաչառ դատաստանաւն վարելոյ զիշխանութիւն: Քանզի անպատմելի իմն է զատավճիռ Խպրահիմ բռնակալին. զի վասն ձւոյ միոյ պատառէր զորովայն մարդոյ. և զայլոն զմտաւ ա՛ծ. վասնորոյ լսելով զբարի համբաւ դատաստանաց նո-

րա ուրախանայր յոյժ. բայց ի մտի ծածկեալ ունէր ոխս՝ չկամէր յանկարծօրէն յայտնել նախարարին մերոյ, զի այն էր նպատակն գործուցանել զնա ի Հայկական դաւանութեան ի զէն մահմետական: Միմիայն ողոքական բանիւք և ծանրագին պարգևօք քաղցրացուցանէր զեռևս զմիտս նորա. հնարէր մարմնասիրական և մարմնաւոր հեշտութեամբ և զիւբալթառամ ծաղկընկեց մեծութեամբ մոլորեցուցանել. բայց տեսանէր զնա խոկութեամբ հաստատուն և անշարժ ի դաւանութեան իւրում. նաև աներկիւղ տայր բանից նորա պատասխան, թէ զանհնարինն կամիս առնել. հա՛ն ի մտաց քոյ զմեղմեխ խորհուրդս քո: Իբրև լուաւ չարագոյն վիրագն զյանդիմանական բանս՝ այլագունեալ ի շարժեալ մաղձիցն դառնութեան ամբարելոցն ի մտի. նաև սկարացուցանէր զչարագործութիւնսն, ասելով յայտնապէս դէմ յանդիման բռնաւորին՝ համարս ունիս տալոյ զայդչափ հաւատելոց հոգւոցդ՝ զորս ի դաւանութեան լուսաւորչական ուրացուցեալ ես: Իբրև ետես իժն ունկնախիծ, եթէ չկարաց գրաւել ընդ սնոտի խաբէյութեամբ ի-

րով, սկսաւ այնուհետև մերայոցդ բա-
նիւք խրախուսել և շարժել քաղցրութեամբ
առ ի կարգեալ իշխանութիւն և ի պաշ-
տօն իւր, պահելով ի մտի զճրագործու-
թիւն իւր. թէ արդեօք որպիսի՞ խոշտան-
գանօք կարացից մոլորացուցանել ի հա-
ւատոյն: Ի բանիս յայսմիկ եկեալ արք
բողոքականք ի նահանգէն Դիզակայ՝ յայտ-
նեալ բռնաւորին զիւրեանցն զդատ ան-
յապաղ կատարելոյ՝ որ ընդ իշխանու-
թեամբ էին քաջ նախարարին մերոյ Աս-
պատայ: Վասնորոյ կոչեալ առ ինքն զնա-
խարար մեր, յայտնեաց զբողոքս եկեալ
արանցն, թէ արդէն իսկ պատահեալ է
ի Ցոր բնակութեան սպանութիւն ինչ.
անյապաղ՝ յերեկոյին ժամու պարտես ան-
գանօր գտանել. ըստ սաստկագոյն պատ-
ուիրանացն ի նմին իսկ ժամու յուղի ան-
կեալ ընդ ծառայից իւրոց գնաց անխո-
տոր ուղղակի ի նոյն գիւղ: Զկնի գնալոյ
նորա բռնաւորն չգտեալ հանգիստ ի
մտացն մախանաց. ուստի պատրաստեալ
զզօրականս քառասուն ամենեքեան զինու-
վառեալս՝ և նախանձաբեկս վասն քա-
ջութեան նորա, արդարև ծարաւի էին
արեան նորա կատաղեալքն: Զար բռնա-

կալն սաստկագոյն պատուիրեալ ևս նո-
ցա, թէ ի գիշերիս յայսմիկ, յորում պա-
հու իցէ, անյապաղ՝ հարկ իւրայն պա-
հանջէ ձեզ իսկ հասանել անդ ի Ցոր գիւ-
ղըն: Իբրև գտանիցէք զնախարարն Հայոց՝
յորում սենեակի կամ տան իցէ, պա-
տեալ պաշարեցջի՛ք զնա սուր ի ձեռին,
մասն ինչ մտի՛ք ի ներքս և մասն ինչ
շուրջ պատեալ զնովաւ պահել զարտա-
քին կողմանսն բնակութեան. մտեալքն
ի ներքս երկիցս և երիցս հարցցեն ահա-
ցուցիչ բանիւք, յայտնելով յառաջագոյն
զմահ և զկեանս նորա. տեսէ՛ք ընդդագոյն
հարցմամբ եթէ չկամի դառնալ, այնու-
հետև հրաման արձակաբար տամ ձեզ
սրախողխող առնել և դառնալ առ իս
փութով՝ առ ի յազդ առնել ինձ: Իբրև
առին զպատուէր նորա զօրականքն, հե-
ծեալ իւրաքանչիւր ոք յերիվարս զար-
մանեալ երկթևեան թռչնոց արագու-
թեամբ զարշաւանս առեալ՝ դիմեալ գնա-
ցին՝ մինչ կամէր ի ներքս փակել զզուար-
ճագեղ լոյսն տունջեան՝ մութն գիշե-
րայինն. Նոքա ուղղակի հասին ի գիւղն
Ցոր. իբրև գտին զնախարարն, դեռ ևս
արթուն, նստեալ ի սեղան ինչ պարկէ

ընդ բազմականաց ի յուրախութիւնս և
ի գինիս պարապեալ. ըստ խրատու բըռ-
նաւորին արարին. և սուր ի ձեռին զնո-
վաւ պատեալ և պաշարեալ ի մէջ առեալ
հարցանէին, թէ հրաման է սաստիկ տեառն
մերոյ դառնալ ձեզ ի քրիստոնէական հա-
ւատոյ. ապա՝ թէ ո՛չ, ահա ունիս տեսա-
նել զչարաչար վախճան կենաց քոց. որ-
չափ սաստկագոյն իմն ստիպելով մխէին
յամենայն կողմանց ի մարմին նորա զծայ-
րըս սուսերացն. արիւն ջերմաջերմ վտա-
կօրէն հոսեալ զյատակս սենեկին և զհան-
դերձս իւր կարմրագոյն ներկէր երանգօք.
զայս ինչ անտանելի տանջանս ստէպ՝
կրկնելով վերադարձ հարցաքննութեամբ.
բայց նա արդարև սիրտ անդամանդեայ
առեալ մնայր իսկ անշարժ յիւրում
քրիստոնէական դաւանութեան. միայն
զայս բանս վերջնականս յայտնեալ կա-
տաղեալ դայլանացն. թէ՝ չթուի ինձ
բարւոք՝ թողուլ զարարիչն մեր և հաճոյա-
նալ մարդկան աչաց անցաւորաց. դուք
ընդէ՞ր յապաղէք. կատարեցէք զհրաման
անօրէն ձերոյ բռնաւորին. և լինիցի Աստ-
ուած վրէժխնդիր անպարտ արեան իմոյ
հոսելոյ: Նորա իբրև լուան սուր եդեալ

յամենայն կողմանց՝ խողխողեցին անդամ
անդամ. թողին այնպէս անցեալ գնացին՝
ի նմին ժամու: Ընդ առաւօտեան պահու
եկին ի բերդաքաղաքն Դող յիւր Հայրենի
բնակութիւն. յայտնեալ ծանուցին դուժ-
կանքն ընտանեաց և բնակչացն. նաև
անկեալ տարածեցաւ համբաւ սպանման
ընդ ամենայն բնակութիւնս և ի գիւղս
իւրոյ գաւառին. վասնորոյ ժողովեալ անդ
ի գիւղն Ցոր դասք քահանայից եւս և պա-
յազատազարմից և հասարակ ժողովրդա-
կանաց. զի և իսկ անդ գումարեցան՝
բիւրք բիւրուց և հազարք հազարաց. ժո-
ղովեալ զբազմահատ մասունս մարմնոյ
ամփոփեցին ի փայտեայ իմն դագաղի.
առեալ բերին ի Հայրական իւր բնակու-
թիւն. ըստ օրինի Հայաստանեայց ուղ-
ղափառ սուրբ եկեղեցւոյ եդին ի սուրբ
Յոհաննու եկեղեցւոջ. և սկսեալ կատա-
րեցին զսրբազան արարողութիւնս պա-
տարագին մինչև ի սրբասացութիւնն:
Տեսին յանկարծ լցեալ ի դուռն եկեղեց-
ւոյ արք անօրէնք ամենեքեան զինու վա-
ռեալ և սուր մերկացեալ ի ձեռս իւր-
եանց խուռն բազմութեամբ դիմեալ մտին՝
ի ներքս սրբոյ եկեղեցւոյն. արգելեալ

խափանեցին զսրբազան արարողութիւնս պատարագին. և բռնութեամբ հանեալ յարտաքս զդագաղն բազմահատ մարմնովն և տարան արտաքոյ բնակութեան ըստ օրինի մահմետականացն մերկացուցին ի պատանացն. և վերստին լուացին ջրով և եղին յայլ ինչ փայտեայ պահարանի, առեալ, տարան մոլլայօք ի գագաթ բլրոյն՝ որ հանդէպ նոյն բնակութեան կայ և անդ ամփոփեցին առ ընթեր քանի ինչ անօրինացն տապանաց: Իբրև վերադարձան ի բնակութիւն, Հայք հարցին յանօրինացն, թէ արարէք ընդէ՞ր այդ անկարգութիւն ընդ ազգիս մերոյ. Նոքա ասելով Իպրահիմ խանն հրամայեալ՝ թէ ի կենդանութեան ուրացեալ էր. վասնորոյ զմեզ առաքեաց կատարել զհրաման իւր: Զի ամենայն բանք սուտ և պատրանք էին. եթէ ուրացեալ էր ընդէ՞ր սրախողխող արին: Աւա՜ղ ողորմելի ազգիս մերոյ ի ձեռս անօրէն թագաւորաց և բռնակալ կառավարչաց նոցա, որքան տանջեալ. և զմանկունս և զաղջկունս տեսանեմք գերեալ և ուրացուցեալ՝ նաև բռնութեամբ քարշեալ տարան ի գրկաց ծնողացն: Ազատեսցէ տէր աստուած

զխղճալի և անխնամարկու ազգս մեր յամենայն յանպիտ չար ոխակալ ազգաց. և տացէ ամենայն կարօտելոց զայն՝ որ խոստացաւ սիրելեաց իւրոց՝ ի հանդերձելումն հոգւով և աստ մարմնով ի Տէր, ամէն:.

Աստանօր դադարին նախարարք և իշխանք յազգէն մեծի Դուկաս վարդապետի. վասն զի որդին քաջ նախարարին Եսայեայ Բաղդասար ի յերկիւղէն Իպրահիմ խանին գնացեալ ի նոյն բռնաւորն թէ կամաւ ունիմ դառնալ յօրէնս մահմետական. ի վերջոյ ուրացաւ զհաւատս Հայոց երկու մկրտեալ որդւովն, Վահանաւ և Սոլանաւ: Ի սուղ ինչ ժամանակ վարեալ զիշխանութիւն իւր, վասն պատահարաց ինչ, Բաղդասար խեղդամահ կորեաւ ի ձեռն Իպրահիմ բռնաւորին. յետ այնորիկ վարէ զիշխանութիւնն ի սուղ ինչ ժամանակ Սոլանն. սա մտաւորեալ էր դառնալ ի դաւանութիւն Հայոց՝ գիտացեալ անօրէնքն բարձին ի միջոյ մահադեղով: Զկնի մահուան նորա իսպառ դադարեցաւ իշխաննութիւնն յազգէն յայնմանէ, վասնորոյ բարկացաւ տուողն իշխանութեան. ասելով՝ որ ու-

րասցէ զիս առաջի մարդկան, ինքն ուրացեալ լինի առաջի Աստուծոյ։ Այժմ կէս մաս ազգի նորա ի նոյն յաղանդ մահմետական կայ. և կէս մասն ի Հայոց դաւանութեան. յոյս մեծ է դառնալ՝ քան մնալն ի նոյն մթութեան. փրկեսցէ Տէր Աստուած յամենայն այսպիսի ինչ չար փորձութենէ ի Տէր, ամէն։. ։. ։.

Այսուհետև պատմութիւնս մեր ի զանազան պատահարաց լինի է՛ որ յազգէն պարսից՝ և է՛ որ ի նախկին նախարարաց և մեծամեծաց յառաջացեալ։.